# Ազգ

Azg

16–22 ՀՈՒՆՎԱՐ 2026 ՈՒՐԲԱԹ 001(5870)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Աքսել Ֆիշերը կմնա կալանքի տակ

Հաջորդ շաբաթ Բունդեսթագի նախկին պատգամավոր, Ադրբեջանից կաշառառու **Աքսել Ֆիշերի** դեմ դատավարության վերջին փուլերն են: Մյունխենի երկրամասային բարձրագույն դատարանում երկուշաբթի օրը դատավարությունը շարունակվել է, նա կմնա նախնական կալանքի տակ: Ինչպես իրազեկել ենք «**Ազգի**» տարեվերջին՝ դեկտեմբերի 26-ի տպագիր համարում, նա բանտում է դեկտեմբերի 22-ից: Քրիստոնյա -դեմոկրատ նախկին պատգամավորի դեմ կոռուպցիայի գործով դատավարությունը հասնում է վերջնափուլին: Դատարանը չի ընդունել պաշտպանական կողմի՝ նախնական կալանքը կասեցնելու առաջարկը: Բողոքարկել են Կարլսռուհեի դաշնային դատարանում: Կողմերի հայտարարությունների վերջնաժամկետը հաջորդ շաբաթասկզբին է, որից հետո դատարանը որոշում է կայացնելու: Մինչ այդ Ֆիշերը կմնա կալանքի տակ:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Ամերիկյան կայսերապաշտությունը ընթացքի մեջ

Երիցս ճիշտ եւ իրավացի էր Նոբելյան մրցանակի մեր դափնեկիրներից **Տարոն Աջեմօղլուն**, որ ժամանակին նախազգուշացնում էր, որ եթե **Դոնալդ Թրամփը** նախագահական ընտրություններից **Ջո Բայդենին** հաղթանակած դուրս գա, ապա դեմոկրասիան, ժողովրդավարությունը վերջ կգտնի Մ. Նահանգներում: Աջեմօղլուն ու մասնագետների նրա խումբը, բացի հասարակագիտական իրենց հետազոտություններից, անշուշտ հետեւել էին, ինչպես ապշահար ողջ աշխարհը, նախորդ ընտրություններում Թրամփի պարտությանը հետեւած, մեղմ ասած, անկարգապահություններին Կապիտոլ Հիլում, հենց Կոնգրեսի շենքում՝ հրձիգ ու պայթուցիկ նյութերի գործադրումով, ոստիկանական ուժերի դեմ գրոհներով, ինչը ափիբերան էր թողել եվրոպական եւ այլ երկրների, ժողովուրդներին ու պետական մարդկանց:

Սակայն, կարծում եմ, որ մեր դափնեկիրն ու նրա թիմը չէին կռահել, որ կրկին իշխանության տիրանալուց հետո թրամփյան հակաժողովրդավարությունը շատ ավելի կոպիտ ու կոշտ կերպով կդրսեւորվի նաեւ այլ երկրներում, առաջին հերթին՝ Վենեցուելայում, որը հենց Ամանորի նախորդ գիշերը, օդային, ծովային ու ցամաքային հարձակման ենթարկվեց, նախագահ Նիկոլաս Մադուրոն ու տիկինը առեւանգվեցին ու տարվեցին Նյու Յորք՝ ամերիկյան դատարանի առաջ պատասխան տալու, իսկ մեկ շաբաթ անց,- դարձյալ չտեսնված ու չլսված, ավելի ճիշտ՝ միայն Միջին դարերում պատմագրված,- Թրամփն իրեն հռչակեց նաեւ Վենեցուելայի նախագահ: Ժողովրդավարության եւ աշխարհակարգի (world order) շա՜տ յուրօրինակ մատուցում, որը հիմնովին ջնջում է արդեն իսկ խարխլված, 1-ին եւ 2-րդ աշխարհամարտերից հետո խելոքացած մարդկության ստեղծած միջազգային կառույցները՝ ՄԱԿ, Անվտանգության խորհուրդ եւ մյուս կազմակերպությունները, Միջազգային դատական ատյանները, երկրների միջեւ համագործակցության ֆինանսական, առողջապահական, բնապահպանական եւ մյուս՝ հակակշռող, փոխօգնության նորմերն ու ընթացակարգերը, այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու վերաբերյալ գրավոր ու բանավոր սկզբունքները:

Վենեցուելայի հափշտակումով մեր երկրագնդի վրա, փաստորեն, հաստատվում է «անտառի օրենքը». ուժեղը ուտում կամ ինչ ուզում անում է նվազ ուժեղ կամ թույլ էակներին: Իսպառ ջնջվում է 1811 թ.ին իսպանացի ու հոլանդացի գաղութարարների ձեռքից Վենեցուելան եւ հետագայում Հարավային Ամերիկայի մյուս երկրները ազատագրած Սիմոն Բոլիվարի հռչակած՝ ժողովուրդների ազատագրության եւ անկախության սկզբունքները: Եվ այժմ այդ երկրները սրտադող սպասում են իրենց նվաճման եւ տրկացման հերթին, սկսելով հարեւան Մեքսիկայից, Կոլումբիայից, Գուատեմալայից, Բոլիվիայից (Սիմոն Բոլիվարի անունով կնքված), Էկվադորից եւ Լատինական Ամերիկայի այլ երկրներից՝ ենթարկվելու 1902  թ.ին Մ. Նահանգների կողմից արդեն նվաճված Պանամայի ճակատագրին: Թրամփի Վաշինգտոնը միշտ էլ պատճառաբանություն կգտնի, ինչպես Վենեցուելայի պարագայում, որի նախագահն իր կանեփի ու կակաչի պլանտացիաներով թունավորում էր ամերիկացի երիտասարդությանը: Առանց խոստովանելու սակայն, որ այդ պլանտացիաները հենց ամերիկյա՛ն ներդրողների փողերով են ծաղկել, «արդյունավետ» դարձել: Այսինքն՝ որ ամերիկացիները մասնակից ու մեղսակից են Մադուրոյի ձեռնարկություններում:

Մեկ խոսքով, Թրամփն ու իր վարչակազմը լծվել են ողջ Հարավային Ամերիկան, եւ ոչ միայն, նվաճելու գործին, ինչը անգլիական The Economist-ի բնորոշմամբ՝ սկիզբն է Արեւմտյան կիսագնդի յուրացման:

⇨2

## ԹՐԻՓՓ-ի գործարկումը արագացվո՞ւմ է

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**




Այս պահին, երբ Իրանում իրավիճակն անհասկանալի է, հազարավոր զոհեր կան, երբ սպասվում է, որ ԱՄՆ-ը, Մադուրոյին կալ տալուց հետո, եւ այլ պետություններ կհարվածեն Իրանին, առհասարակ՝ մեր տարածաշրջանը վերաձեւելու հին ծրագրերը գործի կդրվեն, շատ կուզեինք, որ Հայաստանը աշխարհաքաղաքական ներկա թակարդներից դուրս գար քիչ կորուստներով, հաշվարկված ծրագրերի մասնագիտական պաշտպանվածությամբ: Եւ որ՝ մեր ղեկավարներն ընտրական շրջանի սուտն ու քաղցրությունը ժողովրդի վզին փաթաթելու փոխարեն՝ նրան ճշմարտությունն ասեին:

Բայց վկա է Աստված, որ դա վեց ամիս հնարավոր չի լինելու, դուք միայն սոցիալական ցանցերով մեզ խեղդող քաղաքական թոզփչոցի գովազդների չափերն ու հաճախականությունը նայեք, որ ամեն վայրկյան միջատի պես սողում են աչքուականջ: Մանավանդ ըստ որոշ լուրերի՝ ապագա խորհրդարանի պատկերի գծագրության վերաբերյալ նախնական պայմանավորվածություններ արդեն ձեռք են բերվել, իսկ ընտրական աժիոտաժը քողածածկույթ է լինելու սոսկ: Ինչպես, ի դեպ, միշտ՝ անցյալում ու ներկայում: Հայաստանում իշխանափոխությունները, կուզեք դրանց ասեք հեղաշրջում, կուզեք՝ հեղափոխություն, կուզեք՝ ընտրություն, անձերն անձերով փոխարինելու վարչարարների նոր խմբերի մեջտեղ բերելու մասին են սոսկ, իսկ նույն մի խումբ օլիգարխների գլխից մազ անգամ չի ընկնում, ընդհանուր գծագիրն է խմբի մի քիչ կոնտուրները փոխում:

⇨2

## Հրեաների թիվը Երեւանում աճում է. հակահրեականություն չկա

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Գերմանիա**

«Հրեաներն աշխարհի հնագույն քաղաքում՝ Երեւանում ապահովություն եւ համայնական կյանք են գտնում», գրում է Երեւան այցելած **Ստեֆան Փրամմեն** Գերմանիայում հրատարակվող հրեական «Յուդիշե ալգեմայնե» թերթի հունվարի 11-ի ծավալուն հոդվածում: Մարդկային ջերմությամբ լի նրա շարադրանքը, հուսանք, բնագիր գերմաներենով կկարդան նաեւ Բեռլինում Ադրբեջանի դեսպանության աշխատակիցները, որ տարիներ ի վեր լծված են Հայաստանն ու հայ ժողովրդին հրեատյաց ներկայացնելու համառ ջանքերին: 2023-ին Բաքվի իշխանությունների հրահրմամբ տեղի հրեական դպրոցի տնօրենը նույնիսկ հրավիրում էր Բաքու մեկնել հայաստանաբնակ հրեաներին՝ ակնարկելով, թե նրանց անվտանգությունը խաթարված է ՀՀ-ում: Նման խոսույթն արագ որսացող Բեռլինում Ադրբեջանի դեսպան Աղաեւը դեռ չի արձագանքել այս հրապարակմանը, X-ի իր էջում շաբաթներ ի վեր կարծես մոռացել է կայուն փայփայած մի թեմա՝ ադրբեջանահրեական «դարավոր» բարեկամությունը: Ստորեւ վերոհիշյալ հոդվածին՝ հպանցիկ մեր անդրադարձը:

Երեւանյան «Մամա ջան» սրճարանում ամեն ուրբաթ հրեաներն իրենց տոնական Շաբաթն են նշում՝ քոշեր հավաստագրված նռան գինով, իսկ բարում կարելի է նաեւ լիբանանյան գարեջուր պատվիրել: Հյուրերի, այցելուների մեծ մասը ռուսերեն է խոսում, մյուս գործածական լեզուն անգլերենն է: ՌԴ- Ուկրաինա պատերազմի սկզբին 100 000 ռուս ՀՀ է եկել, իսկ սրճարանը նրանց հանդիպատեղն է: Մոսկվայում հրեա լրագրող **Նաթանիել Տրուբկինը** 2022-ին եկել է Երեւան: Տեղի հրեաներին համախմբելու համար սոցիալական ցանցում չաթ խումբ է բացել, որին անդամակցում է 600 հոգի: Խումբն առիթ է դարձել, որ հիմնվի «Yerewan Jewish Home»-ը, մոտ օրերս նախատեսել են հանդիպել Իսրայելի դեսպանին: 2022-ին Նաթանիելը Երեւանում հանդիպում է նախկին մոսկվայաբնակ ծանոթին՝ հոր հայրենիքում՝ ՀՀ-ում վերաբնակված **Սամսոն Կարապետյանին**: Տրուբկինը Մոսկվայում չի էլ իմացել, որ Սամսոնը նաեւ հրեական արմատներ ունի: «Տասնյակներ զգուշացրել էին՝ ամեն մեկին ծագմանս մասին չպատմել», բացատրում է Սամսոնը, որ



*Լուսանկարը՝ «Յուդիշե ալգեմայնե»: Ձախից աջ՝ Նաթանիել Տրուբկինը եւ Սամսոն Կարապետյանը:*

Հայաստանում զբոսավար է, լրագրող եւ լուսանկարիչ:

Հոդվածագիրը պատմում է սրճարանի այցելուների մասին, որ տարբեր երկրներից են: Նրանց մեջ այժմ Երեւանում բնակվող մի ամերիկուհի կա, որի նախնիները հունգարաբնակ հրեաներ եւ հայեր են: Շուշանայի (հոդվածում Shoshana ձեւով է- **Ա.Հ.**) պապանցին Դավթի աստղն այնքան մեծ է, որ հնարավոր չէ թաքցնել բլուզի կամ վզկապի ներքո: «Եվրոպայում, ԱՄՆ-ում կախազարդ աստղը պարանոցիս հավանաբար մեկ ժամ կարող էի հանրային վայրում լինել, Երեւանում՝ միշտ  պարանոցիս է, տեսանելի»: Շուշանայի ասածին հետեւել է երեւանաբնակ սեղանակիցների հաստատումը՝ Երեւանում հակահրեականություն չկա:

«**Ազգը**» ժամանակին անդրադարձել է Երեւանում սինագոգի վրա հարձակմանը, զրուցել ՀՀ-ում գլխավոր ռաբբի **Գերշոն Բուրշտեյնի** հետ (տե՛ս թերթի 15.12.2023, 22.12.2023 համարները), որ պնդել է, թե «Հայաստանում բացի երկկողմանի հարգանքից եւ սիրուց, ուրիշ բան չի եղել»:

Տրուբկինն ու Կարապետյանը «Յուդիշե ալգեմայնեի» հոդվածում անդրադարձել են 2023-ի միջադեպին, երբ Երեւանում «Համասի» որմազդն է հայտնվել, եւ նույն օրը մեկը, որ մի քանի ժամով ՌԴ-ից Երեւան է եկել, փորձել է հրկիզել սինագոգը: « Այդ մի դեպքն է եղել: Սինագոգը ներկեցինք», ասում է Սամսոն Կարապետյանը:

⇨5

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Ո՞ւր են նրանք, որ կարող կլինեն երկիրը հանել այս ծանր ջրապտույտից

Հայաստանի այսօրվա իրավիճակը եւ այն, ինչ երկրում կատարվում, իրականացվում է ՀՀ գլխավոր պաշտոնյայի ու նրա կամքով կառավարվող իր խմբակի կողմից, նման է վատ երազի: Արցախի կորստից ու դրա հետ կապված բոլոր մյուս դառն իրողություններից բացի, ամեն ազգայինի (անգամ այդ բառի) նսեմացում ու ժխտում, Պատմական Հայաստանի ուրացում եւ սոսկ նյութականի փառք («որտեղ հաց, այնտեղ կաց»), որեւէ էական հարց լուծելիս (զորօրինակ՝ դպրոցի հետ կապված) հասարակական եւ ընդհանուր մասնագիտական կարծիքի արհամարհում, արտաքին սուր վտանգների պայմաններում անվերջ կեղծ օրակարգերի մատուցում եւ ընդդիմախոսների բանտարգելում, օրենքների ոտնահարում, ներքին թշնամանքի անվերջ սերմանում եւ հասարակության պառակտում... ու սա դեռ բոլորը չէ:

Այսօր միջազգային իրավունքի չգոյության եւ բիրտ ուժի հաղթարշավի աշխարհաքաղաքական փոթորիկները սպառնալից մոտեցել են մեր դռանը, իսկ մեր երկիրը կառավարող պաշտոնյաներն ինչո՞վ են զբաղված... կաթողիկոս են «հրաժարեցնում», ապստամբ հոգեւորականներ, հուդաներ բուծում ու ազգային հենասյուն Հայոց եկեղեցին կազմաքանդել փորձելով՝ հանկարծահաս ջերմեռանդությամբ այստեղ-այնտեղ ուժայինների զորքով պաշտպանվող ամենակիրակյա «պատարագներ» բեմադրում...

Այս կորստավտանգ ընթացքը շրջելու միակ հնարավոր ուղին, ըստ ամենայնի, կառավարող ուժին բոլոր օրինական միջոցներով իշխանությունից հեռացնելն է, քանի դեռ ուշ չէ: Չգիտենք՝ այս դեպքում որքանով են ընդունելի այն մեթոդները, որոնցով ժամանակին Նիկոլ Փաշինյանն ու իր քայլիստները հասան երկրի կառավարման ղեկին, բայց իշխանափոխության հիմնարար առիթ են գոնե այս տարվա հունիսին նախատեսված համապետական ընտրությունները: Որոնք, թվում է, միաժամանակ ե՛ւ մարտահրավեր ունեն իրենց մեջ, ե՛ւ իրական հնարավորություն են:



Առաջին դեպքում նախ նկատի ունենք այս անգամ արտաքին գործոնի ուղղակի կամ անուղղակի ազդեցության սպասվող աճը՝ Փաշինյանի իշխանության պահպանման հարցում շահագրգիռ կողմերի կարծես թե ավելացածության պայմաններում: Գործող իշխանությունն այս հարցում պաշտոնապես դրսից «տղա» էլ է բերել՝ ի դեմս Եվրոմիության, որն ինչ-որ ընտրապայքարի համար նրան 15 մլն եվրո է տրամադրել կամ կտրամադրի: Բնական հարց է հնչում՝ ինչպե՞ս է այդ գումարը ծախսվելու... Մյուս կողմից, իշխանությունն իհարկե ունի նաեւ իր ներքին որոշակի ռեզերվները: Վերջերս Ֆեյսբուքի սոցիալական ցանցում հանդիպած մի տեղեկությամբ,- չգիտենք որքան հավաստի,- Հայաստանում այսօր կա միայն տարբեր աղանդներում ընդգրկված կամ դրանց հարող մոտ 400 հազար քաղաքացի: Կառավարության այս չդադարող հակաեկեղեցական արշավի պայմաններում երեւի դժվար չէ գուշակել՝ նրանք ընտրություններին որ ուժի օգտին կքվեարկեն: Նույն սոցիալական ցանցում կա «Աջակցում ենք Նիկոլ Փաշինյանին, միացե՛ք» հրապարակային խումբ՝ 25 հազար անդամով, եւ սա այս կարգի միակը չէ: Ակնհայտ է, որ պայմանավորված Փաշինյանի իշխանության հատկապես երեւի սոցիալական որոշ քայլերով, նա երկրում ունի անկեղծ համակիրների մի կայուն քանակ եւս: Եթե սրան գումարենք նաեւ տարատեսակ կառավարչական լծակների, ընտրացուցակների, խորհրդարանական մանդատների բաշխման մեխանիզմների ընձեռած հնարավորությունները, կարելի է նկատել, որ այս ամենով՝ իշխանության փոփոխության համար պայքարը բարդ ու դժվարին է լինելու: Հաղթահարել սակայն հնարավոր է. եթե այդ ամենի դեմ իբրեւ ամուր պատնեշ կանգնի ընտրող քաղաքացիների մեծամասնության միահամուռ, միասնական ամուր կամքն ու քաղաքացիական ակտիվությունը:

Բայց այստեղ էլ կա վերջին եւ գուցե ամենակարեւոր, այն է՝ անհրաժեշտ եւ արժանի այլընտրանքի հարցը: Լավ, ասում են շատերը, Փաշինյանին ու իր թիմին չընտրենք, բայց կասե՞ք՝ ո՛ւմ ընտրենք: Այսօրվա մեր քաղաքական դաշտի պայմաններում սա նույնքան դժվար եւ ժամանակին մի համոզիչ լուծում չգտնելու դեպքում՝ էլի գործող իշխանության օգտին ծառայող խնդիր է: Վկա՝ 2021-ի արտահերթ ընտրությունները... Կգտնվի՞ այն քաղաքական ուժը, որը նախընտրական համապատասխան փուլում առաջ կբերի ոչ թե սոսկ իր անդամներին ու համակիրներին, այլ առաջնորդվելով երկրի պետական շահերով, ասպարեզ կհանի իրենց կենսագրությամբ ու հեղինակությամբ հայտնի ազգանվեր, կառավարչական հարուստ փորձով աճած, կարող, որոշակի քաղաքական, տնտեսական ու դիվանագիտական ընդունակություններով եւ լուրջ բարոյակամային հատկանիշներով օժտված արժանավոր անհատների: Որոնք նաեւ պատրաստ կլինեն պատասխանատվություն ստանձնելու եւ փոխելով իշխանության հոգեբանությունը՝ օրնիբուն ծառայելու հասարակության համախմբմանը եւ երկրի առջեւ ծառացած իրական խնդիրների լուծմանը, նաեւ այժմ կորսվող արժեքների պահպանմանն ու ամրապնդմանը: Հայրենի արգանդը չի ցամաքել, նման անձինք անպայման պետք է որ լինեն եւ չեն կարող չլինել: Մյուս կողմից, նրանք իրենք էլ պետք է երեւան գան, ինչը չանելն այս պայմաններում համարյա հավասարազոր կարող է լինել դժվարին մարտահրավերների առջեւ կանգնած երկրի շահերին դավաճանած լինելուն:

Ժամանակն էլ չի սպասում:

## Ամերիկյան կայսերապաշտությունը

⇨1 **Տակավին ինձ հայտնի չէ Մ. Նահանգների ժողովրդի հանրային կարծիքը այս եւ զավթողական այլ գործողությունների, ինչպես նաեւ Կանադայի ու Գրոնլենդի նկատմամբ նախագահ Թրամփի հավակնությունների վերաբերյալ (վերջին հարցախույզները խոսում են միայն այն մասին, թե Վենեցուելայի բնակչությունը որքա՜ն երջանիկ եւ ուրախ է բռնապետ Մադուրոյից ազատվելու եւ Թրամփի լծի տակ ընկնելու առթիվ): Հայտնի չէ նաեւ, թե ամերիկյան հանրույթը ի՞նչ կարծիք ունի մեր հարեւան ու բարեկամ Իրանում իր ղեկավարության եւ Իսրայելի հրահրմամբ տեղի ունեցող իրադարձությունների (այս մասին կարդալ 2-րդ էջում մեր աշխատակից, արտակարգ եւ լիազոր դեսպան Գր. Առաքելյանի հոդվածը) վերաբերյալ, որոնք կարող են պատերազմական նոր գործողությունների դուռ բացել տարածաշրջանում:**

**Ասենք՝ մեզ հայտնի չեն նաեւ մեր իսկ կառավարության խորքային քայլերը (եթե կան այդպիսիք) ստեղծված նոր կացության վերաբերյալ, բացի Փաշինյանի կիրակնօրյա հակաեկեղեցական խեղկատակություններից եւ յուրայիններին ժողովրդի փողերով կաշառելու ամենօրյա շռայլություններից:**

**Վ. Սարոյանը մի պիես ունի, որը կոչվում է «Հե՜յ, ո՞վ կա այնտեղ»: Իսկապես, ո՞վ կա այնտեղ, որը կկարողանա զգաստացնել մեր երկրի որոշում կայացնողներին, ձեռնարկել նախազգուշական քայլեր, համախմբել ժողովրդին, ազգային ու պետական միաբանություն ստեղծել, դիմագրավել գալիք համաշխարհային, տարածաշրջանային ու տեղական՝ մեր դեմ ուղղվող անմիջական վտանգները:**

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## ԹՐԻՓՓ-ի գործարկումը արագացվո՞ւմ է

⇨1 Ու այս տեսակետից եթե նայենք ՀՀ ԱԳ նախարար **Միրզոյան**- ԱՄՆ պետքարտուղար **Ռուբիո** հանդիպման արդյունքում հրապարակված ԹՐԻՓՓ նախագծի՝ Հայաստան-ԱՄՆ իրականացման շրջանակի համատեղ հայտարարության քաղաքական մեկնաբանություններին, ապա դրանց մեջ քարոզն ու հակաքարոզն այնքան շատ են, որ ամեն մեկիս մնում է ինքնուրույն կարդալ ու հասկանալ, թե ինչ տեսք է ունենալու Հայաստանը Թրամփի ուղին գործարկելով, մանավանդ, որ մեր տնտեսագետները առայժմ խուսափում են համապարփակ որեւէ կարծիք հայտնելուց:

Մենք աչքի առաջ ունենք իշխանական բազմաթիվ ոգեւորված գնահատականներ՝ Հայաստանի իրավազորության արձանագրման, խաղաղության հաստատման համոզմունքի, ներդրումների մեծ հոսքի, ԱՄՆ-ի հետ լայն համագործակցության, ստանալիք օգուտների, գործընթացի հանդեպ մաքսային, անվտանգային վերահսկողությունը պահպանելու վերաբերյալ: Նաեւ ընդդիմադիրների առաջին գնահատականները՝ մտահոգություններով:

Օրինակ՝ խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչ **Արթուր Խաչատրյանի** կարծիքով, Հայաստանի ապաշրջափակման մասին այդ հայտարարության մեջ խոսք չկա, իսկ նկատվող տրանզիտ բեռնափոխադրումներն Ադրբեջանով ապաշրջափակում չեն նշանակում, ասենք՝ մենք Նախիջեւանով Արարատի մարզ անխոչընդոտ անցում չենք ստանում: Եւ Իրանի հետ կապված իրավիճակի սրումով Հայաստանին կարող են որոշումներ պարտադրվել:

Իսկ որ ավելի կարեւոր է՝ հայտարարությունը ոչ միայն մի շարք անհանգստություններ չի փարատում, այլեւ ուրվագծում է նորերը: Հատկապես որ կարծես ամեն բան արագանում է, **Նիկոլ Փաշինյանը** կառավարության վերջին նիստին խոսում էր հնարավորինս արագ հայտարարությունից բխող գործնական աշխատանքի մեկնարկից՝ դե յուրե համաձայնագրեր, իրավական որոշումներ, ԹՐԻՓՓ անունով ընկերության ստեղծում, երթուղիների որոշում, կառուցապատման իրավունքների, հողի օգտագործման, շինարարություններ ի եւ այլ թույլտվությունների ուրվագծում, անգամ ռուսական ուղղությամբ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ կապող երկաթուղիների վերականգնման վերաբերյալ էր բան հասկացնում:Իսկ Հայաստանում Իրանի դեսպանի բարձրաձայնած մտահոգություններն էլ փորձում էր ցրել:

Բայց տեսեք՝ ծրագրի գործնական մասը երբ սկսվի իրագործվել, ստեղծվի այն ընկերությունը, որն իրագործելու է ծրագիրը, ուրվագծվեն ընկերության ողջ իրավական բազան եւ լիազորությունների շրջանակը, այդ ժամանակ միայն հնարավոր կլինի հասկանալ, թե ի՞նչ է վրա հասել, իսկ այժմ առկա հայտարարությունն ընդամենը հռչակագրային բնույթ ունի եւ գործնական նշանակության (օրինակ՝ ներքոնշյալ մի շարք հարցերի առումով, որ այդպես դրած լուրջ-լուրջ քննարկում են) ոչ մի առարկայական պատկեր չի ուրվագծում:

Ակնհայտն այն է, որ ԹՐԻՓՓ-ով Նախիջեւանը կապվում է Ադրբեջանի հետ, եւ ծրագիրը Տրանս-Կասպյան առեւտրային երթուղու կարեւոր օղակ է՝ ինչ-որ միջազգային առավելություններ թղթի վրա նախատեսած Հայաստանի համար:

### Բայց անգամ կողմերն են ընդունել, որ ԹՐԻՓՓ-ի հաջողությունը կախված է

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հետագա ինստիտուցիոնալացումից (շատ թեական թեզ, եթե նկատի ունենանք Ադրբեջանի մշտական հռետորաբանությունը), Հայաստան-Թուրքիա ամբողջական կարգավորման գործընթացից (էլի թեական թեզ՝ տարածաշրջանային անկայունության ֆոնին), ԱՄՆ կայուն ներգրավվածությունից (էլի մշուշոտ թեզ, եթե հաշվի առնենք Ռուսաստանի եւ Իրանի չկամեցողությունն ու հնարավոր դիմակայությունն այս հարցում):

Հայտարարության՝ ԹՐԻՓՓ ընկերության հիմնման բանաձեւն է անորոշ՝ ԱՄՆ վերահսկիչ բաժնեմասով եւ սկզբունքային հարցերում Հայաստանի վերահսկողությամբ, այս հարցում կսպասենք ընկերության ստեղծման կանոնադրությանն ու պարտավորություններին, հասկանալու համար, թե այդ ո՞ր միջազգային ու տեղական կանոնակարգերով վերահսկիչ փաթեթ ունեցողին կարող է վերահսկել նրանից երեք անգամ պակաս բաժնեմաս ունեցողը: Մի ընկերություն, որը կես դար պատասխանատու է լինելու ծրագրի զարգացման, ասել է թե ՝ Հայաստանի այդ հատվածում կատարվողի համար, իրեն տրված կառուցապատման իրավունքով,74 տոկոս բաժնեմասով (Հայաստանինը՝ 26 տոկոս), անհասկանալի, թե ե՞րբ եւ ո՞ւմ կվաճառի իր բաժնեմասի ինչ-որ հատվածներ: Թե զգայուն խնդիրների վերաբերյալ ի՞նչ համատեղ որոշումների կայացում է նախատեսված Հայաստան-ԱՄՆ ղեկավար կոմիտեի միջոցով՝ չի հասկացվում (իսկ այդ կոմիտեում, բնականաբար՝ ըստ բաժնեմասի ղեկավար կազմ է լինելու, որոշումներն էլ կարող են կայացվել «Ինչո՞ւ գլխարկ չես դրել» առյուծ-նապաստակ ձեւաչափով):

Ո՞ր երկրների կառուցապատող, սպասարկող ընկերությունների հետ են կնքվելու պայմանագրերը՝ պարզ չէ, ինչպես նաեւ այն, թե մաքսային, սահմանային վերահսկողության իրավազորությունը (ֆիզիկական ներկայությունը) Հայաստանը միայնակ, թե՞ զուգահեռ է իրացնելու: Հատուկ նշանակության կազմակերպություններն ո՞վ է հիմնելու՝ ամերիկյա՞ն, թե՞ հայկական կողմը, մասնավոր ներդրումներ կարո՞ղ են կատարվել ոչ բարեկամ երկրներից, ի՞նչ է ծածկված **ֆրոնտ օֆիս** (երրորդ կողմ օպերատորների ներգրավում) ու **բեք օֆիս** գործառնական մոդելի տակ, որը կիրառվելու է, եւ թվային վերահսկողությունը նշանակո՞ւմ է արդյոք, որ ադրբեջանցիները ուղուց օգտվելիս չեն տեսնելու հայ սահմանապահի դեմքը, ինչպես **Ալիեւն** էր պահանջում:

Հարցերը շատ են, շատ մեկնաբանություններ, որ արվել են, այդ թվում՝ Արարատ Միրզոյանինը, լիարժեք պատասխաններ չեն տալիս այդ հարցերին: Գումարած՝ տարածաշրջանային հեղհեղուկ վիճակը Իրանի շուրջ:

Սպասենք, այդ թվում՝ ԹՐԻՓՓ ընկերության ստեղծմանը:

# 47 տարի անց. իսլամական հեղափոխության առաջ կանգնած նոր մարտահրավերներն Իրանում

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

47 տարի առաջ շահական Իրանում հաղթանակած հեղափոխությանը տեր կանգնեցին շիա հոգեւորականները: **Փեհլեւիների** դինաստիան ներկայացնող վերջին միապետը՝ **Մոհամմադ Ռեզա շահը**, որը երկրի տարածքային ամբողջականությունն ապահովելու նպատակով որդեգրել էր «Մեծ քաղաքակրթություն» դոկտրինը, լքեց երկիրը եւ ապաստան գտավ Եգիպտոսում:

Տեսակետ կա, որ այդ ժամանակաշրջանում աշխարհը շահագրգռված էր բազմէթնիկ Իրանը տեսնել միատարր: Սակայն շահի որդեգրած «Մեծ քաղաքակրթություն» դոկտրինն այլեւս ի զորու չէր ապահովելու ցանկալի միատարրությունը: Իսկ շիա հոգեւորականները, հաշվի առնելով իսլամի համախմբող գործոնը, ստանձնեցին Իրանի տարածքային ամբողջականությունը երաշխավորելու պարտավորությունը:

Անցած 47 տարիների ընթացքում կրոնապետական սկզբունքներով կառավարվող երկիրը, Իրաքի բռնապետ **Սադդամ Հուսեյնի** պարտադրած 8-ամյա պատերազմը հաղթահարելուց հետո, ստիպված եղավ դիմակայել նաեւ ներքաղաքական բազմաթիվ խնդիրների՝ սոցիալ-տնտեսական բնույթի բողոքի ակցիաների ու անկարգությունների տեսքով:

Կարելի է օրինակների մի ամբողջ շարք թվարկել: Հիշենք թեկուզ 1994 թ. Թեհրանի ուսանողական համալսարանում իշխանությունների կիրառած բռնությանը հաջորդած երիտասարդական շարժումը, 10-րդ նախագահական ընտրություններից հետո ծավալված «կանաչների շարժում» կոչվող զանգվածային ցույցերը, 2016 թ. **Կյուրոս արքայի** պատվին կազմակերպված միջոցառումներին հաջորդած իրադարձությունները, 2022 թ. կանանց իրավունքներին նվիրված շարժումը, ինչպես նաեւ դրանց նախորդած կամ հաջորդած բազմաթիվ այլ բողոքի ցույցեր:

Նախորդ բոլոր ցույցերը հիմնականում սոցիալ-տնտեսական պահանջներից բխած, ապա քաղաքական երանգավորում ստացած ակցիաներ էին, որոնց անցկացման ժամանակաշրջանը էականորեն տարբերվում էր ներկայիս՝ աշխարհաքաղաքական ցնցումներով ուղեկցվող եւ Իրանի շուրջ ծավալվող իրադարձությունների ժամանակահատվածից:

Դեկտեմբերի 28-ին Իրանում սկսված եւ գրեթե բոլոր նահանգներն ընդգրկած բողոքի ցույցերի ու զանգվածային անկարգությունների ավարտի մասին խոսելը դեռ վաղ է: Սակայն դրանց ծավալն ու ընդգրկվածությունը նախորդների համեմատ կարելի է աննախադեպ համարել:

Ներկայիս աշխարհաքաղաքական առանձնահատուկ իրավիճակը նկարագրելու համար բավական է հիշատակել ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված զարգացումները, Մերձավոր Արեւելքում Իրանի աջակցությունը վայելող պրոքսի ուժերի թուլացման փաստը, Իրանի դաշնակից Սիրիայի ղեկավարի արտաքսումը եւ երկրի ներքին գործերին միջամտելու հետեւանքով Թուրքիայի բացահայտ ներգրավմամբ նախկին դահիշականների իշխանության հաստատումը, ինչպես նաեւ Վենեսուելայի նախագահի ձերբակալության նպատակով Վաշինգտոնի իրականացրած ապօրինի ակցիան, որոնց արձագանքելու կամ մտահոգություն հայտնելու հարցում աշխարհը կարծես որոշակի իմունիտետ է ձեռք բերել:

Հունվարի 8-ից հետո Իրանում ինտերնետ կապի բացակայության, իրադարձությունների կիզակետից ստացվող տեղեկատվության սղության, ինչպես նաեւ արեւմտյան աղբյուրների կողմից շռայլորեն ներկայացվող՝ մեծ մասամբ աչառու գնահատականների պատճառով այսօր դժվար է խոսել Իրանում ծավալվող իրադարձությունների իրական պատկերի մասին, առավել եւս՝ կանխատեսել դրանց զարգացման ընթացքը:

Հստակ է, որ Իրանի շուրջ եւ հենց Իրանում ծավալվող իրադարձությունների պատասխանատվությունն իրենց վրա են վերցրել Վաշինգտոնն ու Թել Ավիվը: Ակնհայտ է նաեւ բողոքի ակցիաների մեկնարկի եւ Ֆլորիդայում տեղի ունեցած **Թրամփ-Նեթանյահու** հանդիպման ժամանակային համընկնումը:

Նեթանյահուի հետ հանդիպումից հետո ԱՄՆ նախագահը Իրանը ներկայացրեց որպես Մերձավոր Արեւելքում խաղաղության հասնելու «գլխավոր խոչընդոտ» եւ, անդրադառնալով 12-օրյա պատերազմին, նշեց, որ ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացված ռազմական գործողությունները հարթել են տարածաշրջանում խաղաղության ճանապարհը: Միաժամանակ նա հայտարարեց, որ Վաշինգտոնը ուշի ուշով հետեւում է Թեհրանի գործողություններին, եւ եթե Իրանն իր ռազմական հզորությունը վերականգնելու փորձեր անի, լուրջ խնդիրների առաջ կկանգնի:



Արձագանքելով Թրամփի հայտարարություններին՝ ԻԻՀ պաշտպանության խորհրդի անդամ **Ալի Շամխանին** X սոցիալական հարթակում գրեց. «Իրանի հրթիռային եւ պաշտպանական հզորությունը սանձահարելի չէ եւ դրա համար թույլտվություն չի պահանջվում», հավելելով, որ եւէ ագրեսիա կունենա կոշտ եւ անհապաղ պատասխան:

Այս սպառնալիքներին ուղեկցել են բազմաթիվ այլ զգուշացումներ եւ սթափեցնող հայտարարություններ: Դժվար է հստակեցնել, թե այս ընթացքում Թրամփը քանի անգամ է խոստացել «պատժել» Թեհրանին՝ բողոքի ցույցերին մասնակցող իրանցիներին ճնշելու փորձերի համար:

ԱՄՆ նախագահի վերջին հայտարարություններից մեկում էլ նշվում էր, որ Իրանը հատել է իր կողմից սահմանված «կարմիր գիծը», եւ ԱՄՆ ղեկավարությունը քննարկում է, թե ինչպիսի հարված կարող է հասցվել Իրանին: Թրամփը նույնիսկ նախատեսում էր խորհրդակցություն անցկացնել ավագ մասնագետների հետ՝ ԱՄՆ հետագա գործողությունների վերաբերյալ որոշումներ ընդունելու նպատակով:

Իրանում բնակվող ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձանց երկրից անհապաղ հեռանալու կոչը, թերեւս, կարելի է դիտարկել այդ խորհրդակցությունների արդյունքներից մեկը: Նույն կերպ, դրանց արդյունք կարող է լինել նաեւ Իրանի հետ առեւտուր իրականացնող երկրների նկատմամբ կիրառվելիք սանկցիաների մասին Թրամփի վերջին հայտարարություններից մեկը:

Այս պահին նույնքան դժվար է թվարկել նաեւ ԱՄՆ տարբեր մակարդակներից հնչող սպառնալիքներին ուղղված Իրանի կոշտ հակադարձումները: Իրանի հոգեւոր առաջնորդ **Խամենեին**, օրինակ, արձագանքելով ԱՄՆ նախագահի սպառնալիքներին, Թրամփին դասել է «աշխարհի ամենաամբարտավան» ղեկավարների շարքին՝ նշելով, որ նա, ինչպես փարավոններն ու Փեհլեւիների դինաստիայի ներկայացուցիչները, կգահավիժի իր իսկ գոռոզամտության հետեւանքով:

Իրանի վրա ճնշում գործադրելու հարցում Թրամփն ունի իր հիմնավորումները, որոնք հիմնականում համընկնում են Իսրայելի ցանկությունների հետ: Վաշինգտոնը փորձում է Թեհրանին ստիպել նստել բանակցությունների սեղանի շուրջ իր առաջարկած օրակարգով: Թրամփի նպատակն է զրկել Իրանին միջուկային ծրագրի շրջանակում ուրանի հարստացումը շարունակելու հնարավորությունից, ինչպես նաեւ վերահսկողության տակ պահել երկրի ռազմականացման ծրագրերը:

Մինչ այս պահը ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանում «հեղափոխության» դրոշը ծածանելու պատվին արժանացել է միայն վտարանդիության մեջ գտնվող փեհլեւիների դինաստիայի վերջին ներկայացուցիչ **Ռեզա Փեհլեւին**: Սակայն նախագահ Թրամփը դեռ չի շտապում 65-ամյա գահաժառանգին շնորհել հեղափոխությունն առաջնորդելու բոլոր դափնիները եւ սպասում է հրապարակում տեսնել նաեւ այլ թեկնածուների՝ տպավորություն ստեղծելով, թե Վաշինգտոնը հետհեղափոխական Իրանի իշխանական հիերարխիայի վերին օղակում իրեն լիովին հավատարմության երդում տված գործչի հարցում առանձնապես շահագրգռված չէ:

## Ո՞վ է Ռեզա Փեհլեւին եւ ինչպիսի՞ն են նրա հավակնությունները

Այս օրերին ակտիվորեն քննարկվում է Ռեզա Փեհլեւիի անձը. ներկայացվում են նրա կենսագրական տվյալներն ու կյանքի ուշագրավ դրվագները: Սակայն հազվադեպ է շեշտվում այն հանգամանքը, որ 17 տարեկանում՝ Տեխասի ռազմաօդային բազայում ռազմական օդաչուի հմտություններ ձեռք բերելու նպատակով ԱՄՆ մեկնած թագաժառանգը, հեղափոխական իրադարձությունների հետեւանքով այդպես էլ չկարողացավ ավարտել ուսումը եւ վերադառնալ հայրենիք: Նա 20 տարեկանում Կահիրեում թագադրվեց որպես Իրանի շահ:

Ռեզա Փեհլեւիի կենսագիրները անդրադարձել են նաեւ նրա կապերին Իսրայելի հետ, ինչպես նաեւ թագաժառանգի համագործակցությանը ԱՄՆ ԿՀՎ-ի հետ:

Վերլուծաբանների ուշադրությունից չի վրիպել նաեւ 12-օրյա պատերազմի ընթացքում Ռեզա Փեհլեւիի ոգեւորված արձագանքը, երբ Իսրայելը հուժկու հարվածներ էր հասցնում Իրանի տարածքին:

Վերջին շրջանում Ռեզա Փեհլեւին հանդես է գալիս իրանցի ցուցարարներին ուղղված կոչերով՝ խոստանալով «ռեժիմի տապալումից» հետո վերադառնալ հայրենիք, գլխավորել հեղափոխական շարժումը եւ անցումային փուլում՝ մինչեւ ընտրությունների կամ հանրաքվեի անցկացումը, ղեկավարել երկիրը:

Շահական ռեժիմի նկատմամբ կարոտախտ ունեցող իրանցիների մի ստվար զանգված պատրաստակամություն է հայտնում Ռեզա Փեհլեւիին գրկաբաց դիմավորելու: Սակայն Իրանի ազերիաբնակ որոշ շրջաններում նրա նկատմամբ վերաբերմունքը զգալիորեն տարբերվում է, ինչը պայմանավորված է այդ տարածքներում դրսից թելադրվող անջատողական նկրտումներով եւ երկրի ամբողջականությունը պահպանելու հարցում առկա մտահոգություններով:

Իրանի շուրջ ընթացող իրադարձությունների վերաբերյալ տարբեր աղբյուրներից փոխանցվող միակողմանի, չստուգված, հակասական եւ հաճախ կանխակալ տեղեկատվության պայմաններում այսօր դժվար է հստակ կանխատեսումներ անել:

Ակնհայտ է, որ ԻԻՀ ներկայիս իշխանությունների առջեւ ծառացած խնդիրները ծայրաստիճան բարդ են: Չի կարելի բացառել նաեւ ամենաանցանկալի սցենարները, որոնք անխուսափելիորեն կունենան բացասական հետեւանքներ նաեւ Հայաստանի համար:

Առաջիկա օրերին, ինտերնետ կապի հնարավոր վերականգնման եւ առավել հավաստի տեղեկատվության շրջանառության պայմաններում, հնարավորություն կլինի ավելի հիմնավորված գնահատականներ տալ, այդ թվում՝ հայ-իրանական հարաբերությունների հետագա զարգացման վերաբերյալ:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# Հովսեփ Թոքաթ - Անպետյանի «Վանի անհետացած աշխարհը» աշխատությունը ներկայացվեց հայաստանյան գիտական հանրությանը

*__Հովսեփ Թոքաթի__ (պապենական ազգանունը՝ Անպետյան) երեք՝ «Ավերված Քղին», «Հայ արծաթագործ վարպետները» եւ «Վանի անհետացած աշխարհը» գիտական- մշակութաբանական բնույթի աշխատություններն արդեն հասանելի են թե՛ լայն ընթերցողական եւ թե՛ գիտական նեղ շրջանակների համար: Այս գրքերը՝ տպագրված հայերեն, անգլերեն, վերջին երկուսը՝ նաեւ թուրքերեն լեզուներով, աշխարհի տարբեր գիտական-ուսումնական հաստատությունների մասնագետների կողմից ոչ միայն բարձր են գնահատվել՝ իրենց բովանդակային հարստության, գիտական ճշգրտության առումով, այլ նաեւ ծառայել են՝ որպես հետագա՝ առավել խորացված եւ մանրամասնված ուսումնասիրությունների նյութ: Սակայն հայաստանյան գիտական շրջանակները, մեղմ ասած, լռություն են պահպանել, եւ պատճառը, կարծում եմ, գրքերի մասին տեղեկացվածության պակասն է: Այդ պակասը լրացնելու համար հեղինակն իր գրքերի օրինակները վերջերս ընծայեց գիտական-մշակութային մի շարք հաստատությունների, առաջատար գրադարանների, նաեւ մշակույթի գործիչների: Այդ հաստատությունների թվում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներից մի քանիսը, Մեսրոպ Մաշտոցի անվ հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ-թանգարանը՝ Մատենադարանը, Սարդարապատի Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանը, ՀՀ ազգային գրադարանը, Երեւանի Ավ Իսահակյանի անվ կենտրոնական գրադարանը եւ այլն: Բոլոր հաստատությունների տնօրենությունները, պատասխանատու անձինք երախտագիտությամբ եւ բարձր գնահատանքով ընդունեցին ընծաները՝ հավաստիացնելով, որ Թոքաթի գրքերը կդառնան հետագա ուսումնասիրությունների նյութ եւ աղբյուր: Նաեւ «Վանի անհետացած աշխարհը» գիրքը նախագծային աշխատանքերի շրջանակում ներկայացվեց Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվ 5 ավագ դպրոցում: Աշակերտության, ուսուցիչների, պատվավոր հյուրերի ներկայությամբ կայացած այդ ուսումնական միջոցառումը յուրատիպ շնորհանդես էր, եւ այդ առիթով ԱՄՆ-ից Հայաստան էր ժամանել հեղինակը՝ Հովսեփ Թոքաթը: Նրան կրթօջախի տնօրեն Գայանե Միչիկյան-Սաֆարյանը հանդիսավորապես հռչակեց՝ որպես «Դպրոցի բարեկամ», եւ Հ. Թոքաթն այդ կոչումն ընդունեց նույն հուզմունքով, ոնց նախկինում ընդունել էր Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Ֆ. Նանսենի Հիմնադրամի Ոսկե եւ ՀՀ Մշակույթի նախարարության Ոսկե շքանշանները, որոնց մինչ այդ արժանացել էր իր հայրենանվեր եւ մարդասիրական գործունեության համար:*




«Վանի անհետացած աշխարհը» աշխատության նախաբանում հեղինակը խոսում է թեմայի ընտրության իր դրդապատճառների մասին «Փոքր տարիքիս կ՚իմանայի պատմուածքներ Վանի մասին, որոնք ինծի կը թուային առասպելական հեքիաթներ՝ անկարեկիր իշխանութիւններ, անարդարութիւններ, ապստամբութիւններ, հերոսամարտեր, ինքնապաշտպանութիւններ: Ժամանակը չկարողացաւ մաշեցնել հետաքրքրութիւնս: Ինչո՞ւ Վանը: Վանեցի էի՞: Ոչ. այստեղ ըլլալով հանդերձ Վանը խոր տեղ գրաւած էր սրտիս ու մտքիս մէջ: Սկսայ փնտռել Վանը պատմութեան ծալքերուն մէջ»: Այս փնտրումներն էին, որ Թոքաթին ուղղորդեցին դեպի Վանի բնակավայրեր, եւ իր ուղեւորությունների արդյունքում նա հարուստ նյութ հավաքեց, որը համահավաք եւ համակարգված, վերլուծաբար շարադրեց ծավալուն գրքով:

Առաջին գլխում ներկայացված է Վանի համառոտ պատմությունը՝ սկսյալ անվանման վերծանության տարբերակներից, ծագումից մինչեւ այդ բնակավայրի՝ հնագույն ժամանակներից մինչեւ Հայոց մեծ եղեռնն ունեցած դերակատարությունը՝ առանձին կանգ առնելով Վանի եւ վանեցիների կրած կեղեքումների, դրանց պատճառների, հույսերի եւ հուսաբեկումների, ապրած անհանգստությունների, տուրքահավաքի անարդարությունների, պատմական իրադարձությունների հոլովույթում հայության, մասնավորապես վանեցիների բռնած դիրքի եւ դիմակայության պատմության վրա: «Հայերու շնորհիւ Վանի մէջ զարգացած էր արհեստներն ու առեւտուրը: Մինչեւ 20-րդ դարու սկիզբը Վանէն օտար երկիրներ կ՚արտածէին ոսկերչական իրեր, գինի եւ պահածոյ (Տառեխ) ձուկ: Վանի բնութեան գեղեցկութիւնն ալ լաւ տպաւորութիւն կը թողուր մարդոց վրայ: Բազմաթիւ ճանապարհորդներ՝ Հայ կամ օտարազգի, Վանը կ՚անուանէին **«Աշխարհի դրախտը»**: Չորս հազար տարուայ ժամանակահատուած մը մշտականօրէն ապրած իր հողերուն վրայ ի՞նչ էր Հայ ժողովուրդին անհանգստութեան պատճառները եւ ասոր յաջորդող տարիներուն պատահածը՝ ապստամբութի՞ւն, թէ՞ ինքնապաշտպանութիւն էր: Հայերը ամէն առիթ օգտագործեցին կայսրութեան սահմաններէն ներս կեանքի, ունեցուածքի եւ պատուոյ ապահովութիւն հաստատելու համար: Պարզապէս իշխանութեան երաշխիքին կը կարօտէին»:

Վանի անկման մասին խոսելիս՝ հեղինակն այն ներկայացնում է ոչ միայն որպես տարածքի կորուստ, այլ նաեւ որպես մշակութային արժեքի, մարդկային հույսի, միասնական գոյության գաղափարի փլուզում: Այդուհանդերձ, Թոքաթը փայփայում է Վանի՝ «իր դիրքը վերահաստատելու» հույսը: Թոքաթի լեզուն հուզական է, զերծ վերամբարձ դատափետումներից, սակայն խոսքն ազդեցիկ է, դիրքորոշումը՝ հստակ: Սա ուղիղ դիմում է ընթերցողին՝ հիշեցնելու, որ կորուստների պատմությունը լոկ անցյալ չէ՛, այլ բաց վերք:

Առաջին գլխում խոսվում է հայ մարդու եւ հայրենի հողի փոխհարաբերության մասին, որը ներկայացվում է նուրբ զգացմունքային եւ գեղարվեստական պատկերների միախառնմամբ: Հեղինակը խորհրդածում է, թե ինչ է նշանակում ապրել հողի վրա, աշխատել հողի հետ ու նրան զգալ ոչ թե որպես ֆիզիկական տարածք, այլ իբրեւ ինքնության, ժառանգության եւ գոյության աղբյուր: Հողը նկարագրվում է ոչ միայն որպես ապրուստի միջոց, այլ որպես կենդանի արարած, պատմություն կրող եւ փոխանցող մի էակ, որում խտացված են նախնիների սերը, պայքարը, հիշողությունը: Մարդու կերպարը տրված է՝ որպես հողի հավատավոր որդու: Պատգամն ակնհայտ է՝ հողից կտրվելն ինքնության կորստի առաջին քայլն է:

«Վանի աշխարհագրությունը» գլուխը զուտ տեղագրական ուսումնասիրություն չէ: Գիտական ճշգրտությամբ հեղինակը ներկայացնում է Վանի աշխարհագրական պատկերը՝ շարադրելով պատմությունը, նկարագրելով մշակույթն ու բնությունը, համակողմանիորեն տալով Վան քաղաքի կառուցվածքը՝ հատակագծի պատառիկներով, թաղամասերի դասավորությամբ, կորուսյալ քաղաքի կենդանի միջավայրով: Եկեղեցիները դիտարկվում են ոչ միայն կրոնական, այլ նաեւ մշակութային ու ազգապահպան նշանակությամբ: Գեղարվեստորեն են նկարագրված Վանա ծովը եւ նրա կղզիները՝ Լիմը, Կտուցը, Առտերը եւ Ախթամարը: Վանի աշխարհագրության նկարագիրն ընդգրկում է նաեւ նրա կենսաբազմազանությունն ու բնաբանական պատկերը: Ներկայացվում են լճերը, դրանց ափագծերը, էկոհամակարգերը, կենդանական եւ բուսական աշխարհը: Գլխի ուշագրավ հատվածներից է Վանի խաղողագործության ներկայացումը: Հեղինակը թվարկում է խաղողի 18 տեսակները, որոնք տարածված են եղել Վանում՝ յուրաքանչյուրն իր համով, բույրով եւ կիրառությամբ: Այդ տեսակներից շատերը ժամանակի ընթացքում մոռացության են մատնվել, իսկ որոշները՝ վերացել: Խաղողի այդ տեսակները դառնում են մշակութային կորստի խորհրդանիշներ:

«Վանի ժողովրդագրական վիճակը» գլուխը շարադրված է ակադեմիական բարեխղճությամբ՝ պատմական իրողությունների, քաղաքական հոսանքների եւ մշակութային փոխազդեցությունների համադրմամբ: Հեղինակը հիմնվում է ինչպես պատմական հիշատակությունների, այնպես էլ Պոլսո Պատրիարքարանի արխիվային տվյալների վրա՝ նշելով, որ անգամ 1915-ին՝ Մեծ եղեռնից առաջ, Վանի հայության թիվը կազմել է շուրջ 197 000: Այս տվյալը կարեւոր նշանակություն ունի, որը մերկացնում է փաստերի այն խեղաթյուրումները, որոնցով փորձ է արվում ժխտել հայության գերակայությունն այս հողերում:

«Վանի հայկական մշակույթը» գլուխը գրքի մարգարիտներից է: Այստեղ գիտականությունը միահյուսված է պոեզիային, հնագիտությունը՝ գեղագիտությանը, հիշողությունը՝ պահանջատիրությանը: Վանի մշակույթի ակունքների վերհանումը սկսվում է նեոլիթյան դարաշրջանից՝ երբ Վանը հանդես էր գալիս՝ որպես օբսիդիանի արդյունահանման ու մշակման կենտրոն: Երկաթի դարի մետաղագործության գծով տրված տեղեկատվությունը նույնքան տպավորիչ է: Գլխում կարեւոր տեղ ունի Վասպուրականի՝ որպես միջնադարյան գրչության կենտրոնի փառահեղ անցյալի ներկայացումը: Վանը եղել է նաեւ կրթության ու գիտության կենտրոն հեղինակը վկայակոչում է 30 վարժարանների գործունեությունը՝ 5104 աշակերտներով: Անդրադարձ կա նաեւ մեր նախնիների ապրելակերպի կարեւոր բաղադրիչներից մեկին՝ խոհանոցին: «Վանի բնակչության զբաղմունքն ու արհեստները» գլխում ներկայացվում է վանեցի հայի կերպարը՝ աշխատասեր, կազմակերպված, ստեղծարար: Փաստվում է, որ հայությունն էր քաղաքային տնտեսության հիմնական շարժիչ ուժը: Հենց միայն այն փաստը, որ Վանում գործել են շուրջ 500 հայ վաճառականներ, ինքնին խոսում է համայնքի կազմակերպվածության եւ տնտեսական ռազմավարության մասին:

«Վանի ոսկերչությունն ու արծաթագործությունը» գլուխն առանձնանում է նյութի խորագիտությամբ եւ աղբյուրագիտական հարստությամբ: Շարադրված է Վանի՝ որպես մշակութային եւ արհեստագործական խոշոր կենտրոնի պատմությունը: Հեղինակն ընդգծում է, որ Վանի արծաթագործությունը պատահական դրսեւորում չէ, ոչ էլ տեղայնական կենցաղային զբաղմունք, այլ մի ամբողջ դպրոց համահայկական մշակութային համակարգում: Վանի արծաթագործական արվեստը թելադրված էր դարերով ձեւավորված գեղագիտությամբ, որի հիմքում ընկած էր հստակ համակարգված դպրոցի ավանդույթն՝ իր ճանաչելի ոճով, տեխնիկական հնարքներով: Վանից տարեկան արտահանվում էր շուրջ 600. 000 արծաթե իր: Սա զուտ վիճակագրական ցուցանիշ չէ:

Այս թվի հետեւում կանգնած են հսկայական արտադրական համակարգ, առեւտրային կայուն կապեր, մասնագիտական պատրաստվածություն եւ, ամենակարեւորը, շուկայի նկատմամբ ունեցած վստահություն: Հեղինակը ցուցադրում է նաեւ այն տեխնիկական բազմազանությունն ու մասնագիտական խորությունը, որով աչքի էին ընկնում վանեցի վարպետները: Նրանց հմտությունները, կիրառած տեխնոլոգիաները եւ եղանակները որոշ դեպքերում նորարարական էին:

⇨5

# Ասթինե Կալաշյանի գիրքը կարոտի մասին է

Արցախցի **Ասթինե Կալաշյանի «Դարպասից այն կողմ»** առաջին գրքի փոքրիկ պատումները կորսված Արցախ աշխարհում մնացած հայրենի գյուղի՝ Մեծ Թաղերի մարդկանց, մանկության թանձրացումների եւ կարոտի մասին են: Գրքի խմբագիր **Ռուզան Մինասյանը** Կալաշյանի արձակը վավերագրական է անվանում՝ զուգահեռ իրականությունների խառնում գեղարվեստական բարձր վարպետությամբ: Ըստ նրա՝ գիրքը խոստովանանք է, որտեղ մեր գերխիս ժամանակներից, կյանքից վերցրած կտավներում շերտ-շերտ կարող ես գտնել տխուր-ուրախ երկրի չսպիացող վերքերի, երկրով շնչող հերոսների ներսի պատերազմի մասին պատմությունները.«Հեղինակը հիանում ու իր հետ մեզ տանում է մի աշխարհ, մի միջավայր, որտեղ շատ երկար կուզեիր մնալ»:

Փոքրիկ գիրքն ընթերցելիս անկրկնելի գտածոներ ես ունենում՝ոչ միայն պատումներով, այլեւ դրանց կցված լուսանկարներով, որոնք Ասթինեի կարոտների իրեղեն ապացույց են:




Այդ գտածոները հուզիչ ու հիշվող են: Արցախի համար մղված մարտերում ոտքերը թողած Յակովը՝ կես մարմնում եղած հզոր ուժով ու այն մասին, թե ոնց այդ կես մարմնում բաբախող հզոր ուժի մեջ նա տեղավորեց հայրենիքն ու ընտանիքի հետ հեռացավ գյուղից՝ վստահ, որ էլի կգնա ու իր ձեռքով կբացի իրենց դարպասը:



Գտածոներ են տատի բույրով շալը, պապի հանդաբույր պիջակը, տատի ծննդավայր Վարանդայի դույլերով բալը, իր ծաղկեցրած գյուղի մատույցներում թշնամու արկի պայթյունից ընկած «էն սիրուն դերասանի նման մեզ նայող իմ մանկության ընկերը» (Էրիկ Լալայանը):

Անկրկնելի ընկերուհիների համուհոտով եռյակը՝ տատը, Ռոզա ափան, Վարդուկ ափան: Յոթհարյուր քայլ այն կողմ հայկական հրաշք նախշերով գորգերի գործարանը: Գյուղի ամենաքաղցրահամ տաք աղբյուրը: Գյուղի միակ էլեկտրական ալրաղացն՝ իր շատ կարդացած, գյուղում հարգանք վայելող, չիբուխը միշտ բերանին, ջաղացի հերթը միշտ արդար պահող նիհար ջաղացպանով:

Հաղթանակից հետո Արցախի սպիտակած հացերով, «Շուշին երնք կալա՞լ» անչափելի ուրախությամբ, «Մեծ գյուղում» մեկ տասնյակից ավելի անուն ունեցող թաղերով՝ Քյալունց, Հայրունց, Մանկապարտեզին, Ճեղացեն, Շկոլեն, Մագազինին, Ստալավոյեն, Կլուբեն...:

Ու կարոտ՛վ, կարոտ՛վ, որ անուն ունի՝ Ասթինե Կալաշյան,«Դարպասից այն կողմ»:

**Մ. Խ.**

# Հովսեփ Թոքաթ - Անպետյանի...

⇨4

«Վանեցի հայերի ընտանեկան կյանքը եւ ավանդույթները» գլխի շարադրանքն ընթերցողին տանում է դեպի մի աշխարհ, ուր ընտանիքն ամեն ինչի հիմքն էր, իսկ ավանդույթը՝ վարքի գերագույն օրենքը: Հեղինակը մանրամասն նկարագրերով վերակենդանացնում է վանեցի հայի ընտանեկան կյանքը: Ի դեպ, օտարազգիների հետ ամուսնությունը խստիվ մերժվում էր: Սա համարվում էր պատվի կորուստ, երբեմն՝ նույնիսկ ազգի դեմ ուղղված քայլ: Ամուսնությունն ազգապահպանության միջոց էր, եկեղեցու եւ համայնքի վերահսկողությունն այդ հարցում բերում էր կայունության, ներդաշնակության ու ինքնության ամրապնդման:



«Վանեցիների հավատալիքները» գլխում հեղինակն ապացույցներ է բերում, որ հայ ժողովրդի հոգեւոր կյանքը չի սահմանափակվել միայն դավանանքով, այլ իրենում պարունակել է բազմաշերտ հավատամքային համակարգ, որի արմատները ձգվում են դեպի անհիշելի ժամանակներ: Բազմաթիվ երեւույթներ՝ բնության ուժերը, լեռներն ու քարերը, արեւն ու կրակը, նախնիների ոգիները, շարունակել են ապրել ժողովրդի գիտակցության մեջ՝ որպես խորհրդանիշներ, սրբավայրեր: «Վան նահանգի (վիլայեթի) հայկական վանքերը» գլխում ներկայացվում է հայկական ճարտարապետության փառքը: Հեղինակը բծախնդիր ճշգրտությամբ հավաքել է Վանի նահանգում գործած եւ այժմ, ցավոք, կորուսյալ վանքերի վերաբերյալ նյութը՝ ճարտարապետական նկարագրությունից բացի ցույց տալով վանքերի՝ որպես ժողովրդի դիմադրության կենտրոնների դերը: Առանձին գլխով խոսվում է են նաեւ Վան վիլայեթի ասորական վանքերի մասին:

«Օսմանյան պետության վարչական կազմն Առաջին աշխարհամարտի նախօրյակին» գլխում Հովսեփ Թոքաթը ներկայացնում է վարչական համակարգի բարդ կառուցվածքը: Դա արված է պատմական փաստերի, արխիվային վկայությունների, համադրումների միջոցով:

Գիրքը շարադրված է լայն հանրության համար բավական մատչելի լեզվով՝ պատմական իրադարձությունների վերլուծական մոտեցմամբ, սեփական ուսումնասիրությունների մասին հետաքրքրական եւ կարեւոր տեղեկատվությամբ, տվյալներ՝ որոնք թանկարժեք մասունքների արժեք ունեն, քանի որ գնալով ավելի ու ավելի ենթակա են կորստյան ու անհետացման:

Հ. Թոքաթի հավաքչության արդյունքը դժվար է կասկածի տակ առնել, նրա ուսումնասիրությունները հավաստի տեղեկատվություն են պարունակում, եւ Վանի, նրա արվեստի, արհեստների հայկականության ապացույցները հիմնավորապես ապացուցվում են այս գրքով: Շեշտենք, որ «Վանի անհետացած աշխարհը» աշխատությունը հասցեագրված է նաեւ օտարազգի ընթերցողին ու գիտական հանրությանը եւ լավագույն կռվան է հայ գիտնականների համար՝ հանդես գալու միջազգային հարթակներում եւ ընդդիմախոսելու նրանց, ովքեր կեղծում են պատմությունը:

# Հրեաների թիվը Երեւանում աճում է. հակահրեականություն չկա

⇨1

Հայաստանում պաշտոնապես գործող հրեական համայնքին նորաստեղծ համայնքը չի ուզում միանալ: («**Ազգը**» բազմիցս հարցազրույց է հրապարակել նաեւ համայնքի ղեկավար **Ռիմա Վարժապետյան Ֆելլերի** հետ, որ փաստել է, թե ՀՀ-ում հակահրեականություն չի եղել, չկա): Նորաստեղծ համայնքի հրավերով Թել Ավիվից առցանց դասախոսություն է ներկայացրել պրոֆեսոր **Լաշա Շակուլաշվիլին**, որ հրազեկել է, թե 19-րդ դարավերջին հրեական համայնքներ կային երկրում, որոնց անդամների զգալի մասը Ուկրաինայից էին: 1863-1917-ին 400 հրեա ընտանիք հայ քրիստոնյա է դարձել (հոդվածում նշված չէ, թե Հայ առաքելական եկեղեցու անդամ է դարձել, սակայն երեւի դա է ակնարկում- **Ա.Ն.Հ.**): Երկրորդ համաշխարհայինի ժամանակ ԽՍՀՄ տարբեր վայրերից հրեաներին Հայաստան են տարհանել, իսկ պատերազմի ավարտին նրանց թիվը մոտ 5000 է եղել: 28-ամյա Սամսոն Կարապետյանի հայրը Թիֆլիսից է, մայրը Ադրբեջանի հյուսիսից՝ հրեական ընտանիքից, բայց պատանեկության ժամանակ քրիստոնյա է դարձել: ԽՍՀՄ-ի վերջին տարիներին շատ հրեաներ Ռուսաստանից Հայաստան են եկել, քանի որ այնտեղ հակասեմականություն չի եղել: 1994-ին պատերազմի, տնտեսական դժվարությունների պատճառով նրանց մեծ մասը Իսրայել է գաղթել:

Սամսոն Կարապետյանն այժմ Ստոկհոլմում եբրայագիտություն է ուսումնասիրում, մեկ տարի հետո կվերադառնա՝ հրեական համայնքային աշխատանքը Երեւանում շարունակելու: Մշակութային միջոցառումներ ավելի շատ ենք կազմակերպելու, երկու ժողովուրդների՝ հրեաների եւ հայերի բարեկամությունն ամրապնդելու ենք, «Յուդիշե ալգեմայնեի» հոդվածում ասում է Տրուբկինը:

## Իմաստաբանական բառարան

### *Թռիչքներ արթմնի*

Հայ ժողովուրդը մեծ թռիչքների ընդունակ ազգ է:

Դուք հայից բացի չեք գտնի գեթ մեկ ուրիշ ազգ, որի ուսահոդից մինչեւ դաստակն ընկած հատվածը կոչվեր այն բառով, որն ի վերուստ նախատեսված է եղել թռչունների համար:

Պարզ ասած՝ միայն հայերի մոտ է, որ բազուկը «թեւ» է կոչվում: Մեկ էլ՝ թռչունների մարմնի աջ ու ձախ կողմերից կպածը, որով նրանք... թռչում են:

Արդյո՞ք սա չի նշանակում, որ հայերը անհիշելի ժամանակներից թռչելու ձիրք են ունեցել: Թե չէ հայ մարտիկը ինչո՞ւ կարոտից պիտի դնդնար.

*«Թռչեի մտքով տուն, ուր իմ մայրն է արթուն»:*

*Կարոտն առնելու համար, օրինակ, թուրքմեն զինվորը կասեր՝*

*«Ձիով սլանայի դեպի իմ յուրդը...»*

Հագարացին էլ՝

«Ուղտ լիներ, ինձ հասցներ Արաբստան...»

Օդակայաններում միայն հայն է, որ իր հայ ծանոթին հետաքրքրությունից դրդված հարցնում է.

- Ո՞ւր ես թռնում:

Եվ ստանում միանգամայն տեղին պատասխան.

- Քու ի՞նչ գործն է:

Եթե հայ երեխայի ուսահոդից մինչեւ դաստակն ընկած հատվածը «թեւ» չկոչվեր, տնային առաջադրանքներն ավարտելուց հետո նա ինչո՞ւ պիտի դուրս վազեր՝ գոռալով.

- Մամա՛, ես թռա:

Միայն հայն է, որ հրճվանքի պահին «վեր-վեր է թռնում»:

Թուրքը, օրինակ, թեւ չունենալու պատճառով, ընդամենը ցատկոտում է («Sevinçten z plamak»): Պարսիկն էլ թռչկոտելու փոխարեն պարզապես «տեղը տիտիկ չի անում»(ruy-e pa band nemishavad):

Իսկ մենք նույնիսկ սայթաքելիս վայր չենք ընկնում, մենք «վեր ենք ընկնում»: Այսինքն՝ բարձրանում ենք:

Վեր է բարձրացել ու անհետացել է նաեւ այն քարագործ վարպետը, որ Սուրբ Հոգուց թեւեր է խնդրել ու Սյունյաց աշխարհի հռչակավոր վանքը անվանակոչել Տաթեւ:

**Կոմիտասն** էլ, իր ձայնը աշխարհասփյուռ հայերին հասցնելու համար պարզապես ապավինել է թեւերին ու ասել.

*Ձայնիկ ունիմ՝ հայուն-մայուն,*
*Որտիդ բունեմ՝ կայուն-մայուն:*
*Ո՛վ իմ թեւիկ,*
*Տո՛ւր իմ հեւիկ,*
*Թռչեմ երթամ...*

**Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ**

*Անվտանգության հարցերով փորձագետ*

# Հետախուզության տեղեկատվական աշխատանքը որպես մասնագիտություն

## *Հայացքներ Մեծ Բրիտանիայից*

*«Ով ճանաչում է միայն Անգլիան, նա չգիտի Անգլիան»:*

Ասացվածք, որ շատ տարածված է Անգլիայում, բայց հատկապես շատ է օգտագործվում Անգլիայի հետախուզության միջավայրում:

Եթե ուսումնասիրում ես տարբեր մասնագիտություններ, ավելի լավ ես սկսում հասկանալ քո ընտրած մասնագիտությունը: 21-րդ դարում մարդիկ հիմնականում խմբավորվում են ըստ մասնագիտությունների: (Ցավոք, կարծում եմ, որ Հայաստանում այդպես չէ.- **Վ.Դ.**): Կարո՞ղ ենք արդյոք աշխատանքը տեղեկատվության հետ եւ տեղեկատվության ձեռք բերելը նույնպես համարել մասնագիտություն:

Տեղեկատվություն ձեռք բերելը եւ դրա համապատասխան մշակումը միանգամայն բարձր որակավորում ունեցող եւ պատվավոր մասնագիտություն է:

Հետախուզական տեղեկատվություն ձեռք բերելը եւ դրա հետագա մշակումը համապատասխանում է գիտական գործունեության պահանջներին:

Ինֆորմացիայի հետ աշխատելիս անհրաժեշտ են մի շարք սկզբունքներ: Ահա դրանցից ամենակարեւոր 3-ը՝ փաստերի գնահատում, ընտրություն եւ ճշգրիտ մեկնաբանություն:

Այս երեք սկզբունքները ճիշտ են եւ անհրաժեշտ են իրավաբանների, լրագրողների, գիտական փորձագետների համար: Բայց հատկապես կարեւոր են հետախույզների համար:

Մտածողություն եւ գործողություն: Ահա՛ հետախույզի համար շատ կարեւոր եւս 2 գործոններ: Անգլիական հետախուզության դասագրքերում նշվում է, որ ոչ մի հետախույզի չի հաջողվել հասնել մտածողության եւ գործողության միջեւ այնպիսի համապատասխանության, ինչին հասել է «չթագադրված արաբական թագավոր» անգլիացի գնդապետ **Լոուրենսը**, մականուններից մեկը show (show անգլերեն բառը մի շարք թարգմանություններ ունի, բայց ես կգերադասեի «Տեսարան» բառը գնդապետ Լոուրենսի վերաբերյալ, նրա մասին ես առանձին հոդված ունեմ, 2022 թ. Մարտի 25-ի «**Ազգ**» շաբաթաթերթում):

«Show» մականունը տրվել է նրան, քանի որ ծառայության ընթացքում ունեցել է նաեւ Թոմաս Էդվարդ Շոու անձնագրային տվյալները:

Մեկ ուրիշ մականունով Լոուրենս Արաբիացին (Lawrence of Arabia), իրոք հետախուզության ստրատեգ, ակտիվ մասնակցություն ունեցավ 1916թ. հունիսին Թուրքիայի դեմ արաբական ապստամբության կազմակերպման գործում: Ժամանակակիցները Լոուրենսի մասին խոսելիս ասում էին՝ «Լոուրենսը լավ գիտի անապատները եւ դիվերսիայի մարտավարությունը»:

* * *

Ինչո՞ւ ես իմ վերջին հոդվածները «**Ազգ**» շաբաթաթերթում նվիրաբերեցի Մեծ Բրիտանիայի հետախուզությանը, այդ հատուկ ծառայության ղեկավարներին՝ **Ռիչարդ Մուրին** եւ նրան փոխարինող **Բլեյզ Ֆլորենս Մետրեվելիին** (նշանակվել է Mi-6 ղեկավար 2025թ. հոկտեմբերի 1-ին): Որովհետեւ, կարծում եմ, ընթերցողին կհետաքրքրի Անգլիայի հետախուզության Modus Operandi -ն (գործունեությունը եւ հիմնական կարգախոսը) այս ժամանակաշրջանում:

1. Պայքար Ռուսաստանի ազդեցության դեմ:
2. Ռուսաստանի ազդեցության սահմանափակումը այն երկրների վրա, որոնք ձգտում են հեռանալ Մոսկվայից (ինչպես օրինակ Հայաստանում):
3. Կենտրոնացել պայքարը Ուկրաինայում Ռուսաստանի ագրեսիայի դեմ տարածաշրջանային կայունության միջոցով: Եթե որոշ ժամանակ առաջ այս ամենը կատարվում էր հնարավորինս գաղտնի առանց հրապարակայնացման, ապա հիմա այս մասին եւ այլ ակտիվ գործունեության մասին խոսվում է բարձրաձայն առանց քողարկումների: Ավելին, Բլեյզ Մետրեվելին հայտարարում է, որ այսօր աշխարհում կոնֆլիկտների վարման օրենքները գրվում են Ռուսաստանում եւ այլ՝ իրենց համար թշնամական սուբյեկտներում: Հետախուզության պետը նշում է նաեւ, որ գլոբալ սպառնալիքները ավելի եւ ավելի բարդանում են եւ փոխկապակցվում: Դրանք են տեխնոլոգիական ձախողումները, հիբրիդային սպառնալիքները, ահաբեկչությունը եւ տեղեկատվական մանիպուլյացիաները (ի միջի այլոց, տիկին Մետրեվելին ճիշտ է թվարկում մեր ժամանակաշրջանի սպառնալիքները: Սակայն, միայն ՌԴ, Չինաստանը եւ Իրանը, այսինքն միայն Արեւմուտքի թշնամիները չեն, որ ակտիվ են այդ ոլորտներում, շատ ակտիվ են զբաղվում այդ գործունեությամբ նաեւ Արեւմուտքի հատուկ ծառայությունները, հատկապես Անգլիայի, նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետախուզությունները):

Իր առաջին հանրային ելույթի ժամանակ 2025թ. դեկտեմբերի 15-ին Բլեյզ Մետրեվելին շարադրեց իր տեսլականը, թե ինչպես օգտագործել տեխնոլոգիաները հետախուզական տվյալներ հավաքելու համար: Ըստ որում, նա ընդգծեց, որ Մեծ Բրիտանիան գործում է «խաղաղության եւ պատերազմի միջեւ ընկած տարածությունում»:

Դրանից եւ մի շարք այլ հանգամանքներից ելնելով Mi-6 հետախուզության սպայական կազմը, հետախուզական մի շարք արհեստավարժ գիտելիքների հետ միասին պետք է յուրացնի ծածկագրային եւ գաղտնագրային կապի միջոցները:

Այդ ելույթի ընթացքում, որը տեղի ունեցավ Թեմզա գետի ափին տեղաբաշխված հետախուզության կենտրոնակայանում, տիկին Մետրեվելին (ի դեպ, անգլիայի հետախուզության 116-ամյա պատմության մեջ առաջին կին ղեկավարը, որը փոխարինեց Հարավային Կովկասի, Թուրքիայի եւ Մերձավոր Արեւելքի լավագույն մասնագետներից մեկին՝ Ռիչարդ Մուրին) ընդգծեց, որ առաջավոր տեխնոլոգիաները կարագացնեն համաշխարհային սպառնալիքները եւ միեւնույն ժամանակ կբացեն նոր հնարավորություններ հետախուզությունների համար:

Չմոռանանք նշել, որ մինչեւ հետախուզության պետ դառնալը Բլեյզ Մետրեվելին այս նույն գերատեսչությունում զբաղեցնում էր տեխնոլոգիաների եւ նորարարությունների (технологии и инновации) դեպարտամենտի պետի պաշտոնը: Այս դեպարտամենտը այլ կերպ կոչվում է Q :



«Արհեստական բանականության» ոլորտում ձեռք բերած հաջողությունները, ինչպես նաեւ կենսատեխնոլոգիայի եւ ֆինանսային հաշվարկների ձեռքբերումները զարգացնում են էկոնոմիկան եւ վերաշարադրում են հակամարտությունների իրականությունը:

«Մենք հիմա գտնվում ենք մի տարածության մեջ, որտեղ գործում են պատերազմները եւ խաղաղությունը միաժամանակ», - հայտարարեց Մետրեվելին:

Մետրեվելին իր ելույթում նշեց այն վտանգների մասին, որ սպառնում է աշխարհին Չինաստանի հետախուզության գործունեությունը, սակայն հիմնական ելույթը, իհարկե, կենտրոնացած էր Ռուսաստանից սպառնացող վտանգների շուրջը:

Ընդգծվեց այն հանգամանքը, որ Ռուսաստանը գրեթե պատրաստ է պատերազմել Եվրոպայի հետ:

Ռուսաստանը զբաղված է քաոսային իրավիճակի արտահանումով, որը արտահայտված է կիբեռհարձակումներով՝ տարբեր ենթակառուցվածքների վրա, ինչպես նաեւ օպերատիվ ապակողմնորոշումներ տարածելով (оперативная дезинформация).

Անգլիայի հատուկ ծառայության ղեկավարը նշեց, որ այդ ամենի դեմ պայքարելու համար հարկավոր է մոբիլիզացնել երկրի ամբողջ հասարակությունը, այդ թվում նաեւ մանկահասակներին, որոնք պետք է փոքրուց սովորեն ճիշտ գնահատել իրենց մատուցվող տեղեկատվությունը (ի դեպ, շատ կարեւոր հանգամանք է նաեւ Հայաստանի մեր երեխաների համար՝ հեղինակի նշում.- **Վ.Դ.**): Ամբողջ հասարակությունը պետք է սովորի ճանաչել մանիպուլյատիվ ալգորիթմները եւ տարբերել դրանք ճշմարտությունից, որը կօգնի ազատվել վախից եւ անհասկանալի ռեակցիաներից:

Հայտնի է, որ Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը եւ հատուկ ծառայությունները ակտիվորեն ուսումնասիրում են արհեստական բանականությունը, որպեսզի օգտագործեն այն էլեկտրոնային փոստը եւ նամակագրությունները ուսումնասիրելու:

Mi-6 եւ ԱՄՆ ԿՀՎ-ն (Կենտրոնական հետախուզական վարչությունը) սկսել են ակտիվորեն համատեղ օգտագործել «արհեստական բանականությունը» որպես պայքարի միջոց տեխնոլոգիապես զարգացած թշնամական ուժերի դեմ:

Խոսելով տեխնոլոգիաների հետագա զարգացման մասին՝ միեւնույն ժամանակ տիկին Մետրեվելին ընդգծեց մարդկային գործոնի խիստ կարեւորությունը:

«Տեղեկատվությունը պահանջում է հայեցողություն, բարդությունը պահանջում է պարզություն, եւ միայն մարդիկ կարող են ընտրել ճիշտ ճանապարհը: Արհեստական բանականությունը կարող է այս հարցում օգնել մարդուն, բայց ոչ փոխարինել նրան»: ( Information requires judgment, complexity demands clarity and only people can decide which plan do follow. Artificial Intelligence will augment and not replace our human skills ).

«Հետախույզը պարտավոր է հավասարապես տիրապետել աշխատանքին ինչպես տեխնոլոգիաների, կոդերի, այնպես էլ մարդկային ռեսուրսների հետ: Այսուհետեւ հետախուզության կադրերի ընտրություն կիրականացվի լեզվաբանների, վերլուծաբանության մասնագետների եւ ինժեներ-տեխնոլոգների ոլորտներից»:

Ելույթի վերջում Մետրեվելին իր երկրի հասարակությանը խոստացավ մշտապես շփվել եւ համագործակցել նրա հետ՝ չխախտելով Silent Courier (Լուռ սուրհանդակ) սկզբունքները:

(Պարզ է, հետախուզությունը չի կարող լրիվ թափանցիկ աշխատել ցանկացած հասարակության առջեւ՝ հեղինակի նշում.- **Վ.Դ.**):

Ահա եւ Մետրեվելիի ելույթի վերջին արտահայտությունը. «Մեզ սահմանում է ոչ թե այն, ինչ մենք կարող ենք անել, այլ այն, ինչ մենք ընտրում ենք անել»:

Չնայած ես Մեծ Բրիտանիայի հետախուզությունը եւ Ռիչարդ Մուրին երբեք չեմ համարել Հայաստանի դաշնակիցներ, բայց պետք է խոստովանել, որ տիկին Մետրեվելին խելացի սկզբունքներ է առաջարկում հետախուզության սպայական կազմի համար: Մեր հետախուզությանն էլ չէր խանգարի (հաշվի առնելով մեր երկրի եւ ժողովրդի առանձնահատկությունները) ճիշտ ընտրություններ կատարել:

Եվ վերջում նշեմ, որ Ռուսաստանի արտաքին հետախուզության պետը՝ **Սերգեյ Նարիշկինը** Մետրեվելիի հանրային ելույթից հետո (դեկտեմբերի 15, 2025թ.) զանգահարել է նրան եւ երկարատեւ զրույց է ունեցել հետը:

Ինչի մասին կարող են զրուցել (այն էլ հեռախոսով, որը, ըստ երեւույթին, լսել են մի շարք այլ հետախուզություններ, որոնցից գաղտնի կամ չէր կարող լինել Նարիշկինի եւ Մետրեվելիի միջեւ.- **Վ.Դ.**) երկու ոչ բարեկամ պետությունների հետախուզության պետերը մեկնաբանման կարիք, կարծում եմ, չունի, միգուցե՝ «միասին պայքարենք միջազգային ահաբեկչության դեմ» եւ այլն, բայց ոչ, իհարկե, վաղվանից այլեւս իրար դեմ չաշխատենք: Այս աշխարհում այն վիճակն է, որ նույնիսկ դաշնակից պետությունների հետախուզությունները աշխատում են իրար դեմ...

Սա՛ է իրականությունը, որ պետք է հաշվի առնեն նաեւ Հայաստանի հատուկ ծառայությունները:

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Շերլոք Հոլմսի թանգարանի հիմնադիր հայուհին

## Լինդա Ռայլին մոր՝ Գրեյս Այդինյանցի մասին



Մայր եւ դուստր




*__ԵՐԵՎԱՆ-ԼՈՆԴՈՆ__ - Լոնդոնաբնակ հայազգի գործարարուհի* ***Գրեյս Այդինյանցը*** *(1927-2015) հայտնի է որպես 1990 թվականին Լոնդոնի Շերլոք Հոլմսի թանգարանի հիմնադիր: Արթուր Քոնան Դոյլի լեգենդար հերոսի «ապրած» Բեյքեր սթրիթ փողոցում գործող այս թանգարանը տարեկան ունենում է բազմահազար այցելուներ աշխարհի տարբեր ծայրերից:*

Գրեյս Այդինյանցի մասին քիչ բան է հայտնի: Նրա վաղ տարիներն անցել են Իրանում եւ Հնդկաստանում, որտեղ էլ ստացել է կրթությունը: Հանդես է եկել որպես դերասանուհի, ***Միրիամ Սթարք*** *անունով նկարահանվել է հնդկական ֆիլմերում՝ Մոդհու Բոսեի «Մայքլ Մադհուսուդհան» (1950) եւ Կալի Փրասադ Ղոշի «Վիդյասագար» (1952): Տեղափոխվելով Անգլիա՝ եղել է Լոնդոնում գործող «Օգնություն Հայաստան» եւ «Օգնություն Հայաստան միջազգային» ՍՊԸ-ների տնօրեն ու քարտուղար:*

Այս ուշագրավ կնոջ մասին ավելին իմանալու համար նամակով դիմեցի նրա դստերը՝ ***Լինդա Ռայլիին****՝ բրիտանացի լրագրող, հրատարակիչ եւ ԼԳՏՔ իրավունքների պաշտպան, որը սիրալիր համաձայնեց հարցազրույց տալ հայ մամուլին:*

**-Հարգելի՛ Լինդա, մեր ընթերցողներին կցանկանայի ներկայացնել ձեր մոր անձը եւ գործունեությունը: Նրա մահազդականում նշված է, որ հստակ չէ՝ Գրեյս Այդինյանցը ծնվել է Հայաստանո՞ւմ, թե՞ Լոնդոնում, սակայն գրված է, որ նրա ընտանիքը Լոնդոն է տեղափոխվել նախ Օսմանյան Թուրքիայի, ապա՝ Հայաստան մտած վաղ խորհրդային իշխանությունների հալածանքներից փախչելով: Նրա ազգանվան «յանց» վերջավորությունը հուշում է նրա արեւելահայ ծագումը: Ի՞նչ կարող եք պատմել նրա նախնիների մասին:**



*Լինդա Ռայլի*

- Այո՛, մորս ընտանիքն Արեւելյան Հայաստանից էր: Գրեյսը ծնվել է Իրանում: Փոքր հասակում Իրանից ոտքով հասել է Հնդկաստան՝ Կալկաթա: Ցավոք, նրա ծննդյան վկայականը ոչնչացել է Իրանում՝ եկեղեցու հրդեհի պատճառով: 1956 թվականին Գրեյսը մեկ տարվա մուտքի արտոնագրով մեկնել է Լոնդոն: Վիզայի ժամկետն ավարտվելուց հետո նրան կարգադրվել է երկիրը լքել, բայց նա մնացել է Անգլիայում՝ մոտ հիսուն տարի ապրելով առանց անձնագրի: 1990-ականների վերջին նա որոշել է դիմել բրիտանական քաղաքացիություն ստանալու համար եւ պաշտոնապես դարձել է այն անձը, որը քաղաքացիություն ստանալու պահին ունեցել է դեռեւս ուժը չկորցրած ամենահին հրամանը երկիրը լքելու վերաբերյալ: Քանի որ Գրեյսը չի ունեցել ծննդյան վկայական, վերջնականորեն ստացել է մշտական բնակության թույլտվություն: Կրտսեր եղբայրս, քույրս եւ ես Ռայլի ենք, քանի որ մայրս ստիպված է եղել փոխել իր ազգանունը՝ որպես անօրինական ներգաղթյալ չհայտնաբերվելու նպատակով: Միայն ավելի ուշ ավագ եղբայրս փոխել է ազգանունը եւ դարձել Այդինյանց: Սակայն մենք միշտ մեզ հայ ենք համարել, քանի որ մայրս միշտ մեզ պարտադրում էր երբեք չկորցնել մեր հայկական ինքնությունը:

**-1990 թվականին, երբ ձեր մայրը վաճառել է իր տունը եւ իր գրեթե բոլոր խնայողությունները ներդրել Շերլոք Հոլմսի թանգարան հիմնելու համար, ինչպե՞ս է նրա ընտանիքն արձագանքել նրա այդքան անսովոր ու համարձակ քայլին:**

- Ընտանիքը շատ ուրախ է եղել: Գրեյսը խորապես ուսումնասիրել է Շերլոք Հոլմսի մասին բոլոր վեպերի միջավայրը՝ ջանասիրաբար իր արձանագրելով նկարագրված յուրաքանչյուր սենյակի մանրամասները: Այնուհետեւ նա այցելել է Մեծ Բրիտանիայի լավագույն աճուրդային տները՝ ձեռք բերելով վիկտորիական ժամանակաշրջանի իրեր ու կահույք՝ սենյակները ճշգրտորեն վերարտադրելու համար: Մոտ քառասուն տարի անց այդ իրերից շատերը դեռ իրենց տեղում են:

**- Կարծում եմ՝ շատ զբոսաշրջիկներ կարծում են, թե Շերլոք Հոլմսը իրական անձ է եւ այցելության ժամանակ զվարճալի հարցեր են տալիս:**

- Այո՛, հատկապես այն ժամանակ, երբ ես որպես թանգարանի տնօրեն էի աշխատում: Գրեյսը միշտ ասում էր, որ այցելուներին բացատրելը, որ Հոլմսն իրական մարդ չի եղել, նույնն է, ինչ երեխաներին ասել, որ Ձմեռ Պապ գոյություն չունի: Շատ այցելուներ հիասթափվում էին՝ իմանալով, որ նա երեւակայական կերպար է: Հիմա ես թանգարանի հետ որեւէ կապ չունեմ՝ իմ եղբայր **Ջոն Այդինյանցի** հետ լուրջ ընտանեկան հակասության պատճառով, ինչը բավական հայտնի է:

**-Կարո՞ղ եք մի փոքր պատմել այն հայկական կազմակերպությունների մասին, որոնց մեջ ներգրավված է եղել Գրեյս Այդինյանցը:**

- Մայրս այդ թեմայով շատ չի խոսել ինձ հետ, բայց գիտեմ, որ նա նվիրատվություններ է կատարել բազմաթիվ հայկական բարեգործական կազմակերպությունների եւ զգալի գումար է փոխանցել Հայաստանի





երկրաշարժի հիմնադրամին: Մի անգամ ինձ ասել է, որ իր նվիրատվությունների համար Հայաստանի կառավարությունը նրան մի արտոնություն է շնորհել:

**-Ձեր մայրն ունե՞ր ինչ-որ առանձնապես հայկական բան:**

- Այո, ամե՛ն ինչ: Նրա ինքնությունը խորապես հայկական էր, եւ նա դա փոխանցեց իր զավակներին: Նա ինձ, եղբորս՝ Սթիվենին եւ քրոջս՝ Ջենիֆերին, ուղարկել է շաբաթօրյա հայկական դպրոց՝ Կյուլպենկյան տանը, իսկ մեզ մկրտել է Քենսինգթոնի Հայ Սթրիթում գտնվող Հայ Առաքելական եկեղեցում: Չնայած որ նախ Հնդկաստանում, ապա Մեծ Բրիտանիայում մեծանալը նրան որոշակիորեն օտարացրել էր, սակայն երբ նա վերջապես ստացավ մշտական բնակության իրավունք, առաջին բանը, որ արեց, եղավ Հայաստան ճանապարհորդությունը: Շատ հստակ հիշում եմ, թե ինչպես երբ ոտք դրեցինք հայկական հողի վրա, նա ընկավ գետնին, համբուրեց հողը եւ լաց եղավ:

**-Այո՛, հուզիչ էր, երբ իմ անգլերեն ողջույնին պատասխանեցիք հայերեն «բարեւ»-ով...**

- Մենք մեզ ամբողջությամբ հայ ենք համարում՝ աշխարհի հայ Սփյուռքի մի մասը: Գրեյսը միշտ նշում էր հայկական Սուրբ Ծնունդը՝ հունվարի 6-ին, եւ երբ փոքր էինք, բոլորս միասին գնում էինք Հայ Առաքելական եկեղեցի՝ տոնին մասնակցելու: Ես նույնպես մի քանի անգամ այցելել եմ Հայաստան, եւ մայրս միշտ ասում էր, որ մահից հետո իր մոխիրը ցրվի Արարատ լեռան վրա...

**-Լի՛նդա, շնորհակալ եմ, ձեր պատասխանների համար: Հուսով եմ, որ Շերլոք Հոլմսի թանգարանի այցելուները Քոնան Դոյլի հերոսների հետ մեկտեղ կճանաչեն նաեւ նրա հիմնադրին՝ այս եռանդուն եւ խարիզմատիկ տարագիր հայուհուն...**

# Մարիաննա Միրզաբեկյանի ցուցահանդեսում Արցախն է




Գերմանիայի Թյուրինգիա երկրամասի հարավում գտնվող Արնշտադի քաղաքային գրադարանում բացվել է արցախցի **Մարիաննա Միրզաբեկյանի** նկարչական ցուցահանդեսը, իրազեկում է տեղական insuedthueringen կայքը, որ հունվարի 13-ի հրապարակման վերնագիր է դարձրել «Ցուցահանդեսը հիշատակում է մի ժողովրդի մասին, որ երկիր չունի»: **Բերիթ Ռիխթերը** (Berit Richter) հոդվածում պատմում է, որ Մարիաննա Միրզաբեկյանն իր հայրենի Լեռնային Ղարաբաղի պատերազմի եւ տեղահանության ականատեսն է եղել, փորձել է ցուցահանդեսում այդ արհավիրքները, իր ապրումները ներկայացնել: Ցուցահանդեսի բացմանը գերմանացի երաժիշտները հայկական մեղեդիներ են նվագել:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Մի կանգառի պատմություն

Երեւանում հանրային տրանսպորտի կանգառի վայրերը թերեւս մի քանի հազար են: Դրանցից մեկն է Ռուբինյանց փողոցի թիվ 17 հասցեի հարեւանությամբ գտնվողը, որից օրվա ընթացքում մի քանի հազար մարդ է օգտվում, նստում ու իջնում: Խոսքս առավելապես առաջինների մասին է, տարբեր տարիքի ու կազմի մարդկանց՝ կանանց ու տղամարդկանց, երիտասարդների ու ավագների, ծխողների ու զրուցասերների, հանգիստ ու անհանգիստ բնավորություն ունեցողների, մի խոսքով՝ վերջին տասնամյակներին երեւանցի դարձած հայաստանցիների: Նրանց թվում են մերձակա շենքերում բնակվող շախմատի գրոսմայստեր ու մարմնամարզության աշխարհի գավաթակիր, դասախոս ու նախարարությունների տարբեր աստիճանների պաշտոնյաներ, ուսանողներ ու արդեն ընտանիք կազմած զույգեր, փոքրիկների հետ ու ուսապարկերով երթեւեկողներ... Ինչո՞ւ եմ այսչափ մանրամասնում՝ մի պարզ պատճառով, եթե երեւանյան հազարավոր տրանսպորտային կանգառներ անվանվող վայրերը ինչ-որ նշումներ ունեն, նաեւ ծածկով նստարաններ, Ռուբինյանց 17 հասցեում տեղակայվածում այդպիսիք բոլորովին չկան: Մարդիկ, ովքեր րոպեներ անց «կմուծվեն» հերթական 150 դրամով, արեւի ու անձրեւի, ձյան ու քամու ազդեցություններին են ենթարկվում, քրտնում ու թրջվում, մրսում ու սրթսրթում, իրենց այս ստորացուցիչ վիճակն անիծում: Այս ամենի հետեւանքով ծնվեց Երեւանի քաղաքապետին ուղղված ներքոհիշյալ դիմումը:

***Երեւանի քաղաքապետ պրն. Տ. Ավինյանին***

***Դիմում***

Թեեւ Երեւանի քաղաքապետարանը ըստ քաղաքացու «չէ»-ի ու «ոչ»-ի կառույց է, այսուհանդերձ երկար ժամանակ տարբեր ժամերի հայտնվելով Ռուբինյանց փողոցի թիվ 17 շենքի մերձակա կանգառում արեւի ու անձրեւի, նաեւ դիտելով ձյան ու քամու պայմաններում շարժակազմերի սպասող մարդկանց խեղճացած դեմքերը, որոշեցի մի կողմ դնել անտարբերի պահվածքս:

Տարվա սկզբին հիշյալ կանգառում, անցորդների համար նախատեսված մայթին մեկ նստարան հայտնվեց, հետո երկրորդը, որոշ ժամանակ անց երրորդը, հիմա՝ 4-րդը: Մայթը պարզապես խլվեց անցորդներից, որոնք ստիպված են երթեւեկելի հատվածից օգտվել, վտանգը անտեսել: Իսկ հարեւանությամբ 15x5 մետր անխնամ տարածք կա, զույգ աստիճանների միջեւ, որտեղ կարելի է սրահ - կանգառ կառուցել, քանզի այստեղով են երթեւեկում մոտակա 18, 16, 9 մի քանի բարձրահարկերի ու 4 - 5 հարկանի մի քանի տասնյակ շենքերի հազարավոր բնակիչները: Հավելեմ, որ տարածքում չկա թեքահարթակ, որի պատճառով մանկասայլակներով այստեղ հայտնվողները աջ ու ձախ են նայում, մինչ օգնող մեկին գտնեն վերեւ կամ ներքեւ անցնելու համար: Էլ չեմ խոսում հաշմանդամների մասին:

Կարդացեք դիմումս Ձեր հավաքներից մեկում եւ հարցրեք, թե արդյո՞ք մեկը չկա այս կանգառից օգտվող, ով ավելորդ է համարում այս մասին խոսել:

Է, է, է, ում ինչ եմ ասում... թե՞ ճիշտ չեմ:

***Քաղաքացի...***



Օրեր անց հեռախոսազանգ եմ ստանում: Քաղաքապետարանի պաշտոնյան հետաքրքրվում է սրահ - կանգառ արտահայտությունից, որին ի պատասխան տեղեկացնում եմ, որ այն հարմարությունները, որոնք տեղադրված են կանգառներում, հազիվ 6 - 7 երթեւեկողի են բավարարում, իսկ հիշյալ կանգառում օրվա ընթացքում, տարբեր ժամերի մինչեւ 30 - 40 մարդ է կուտակվում, որոնք ծածկի կարիք ունեն: Սրահի պարագայում ընդլայնվում է առաջնահերթ այլ ծառայությունների մատուցումը, ինչպիսիք են ավտոմատ սարքերով սուրճի, հյութերի, բուտերբրոդների վաճառքի կազմակերպումը: Լավագույն սպասումով բաժանվում ենք:

Օրեր անց ստանում եմ քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ **Վազգեն Հարությունյանի** ստորեւ տպագրվող հետեւյալ պատասխանը:

**Քաղաքացի Գեղամ Քյուրումյանին**

Երեւանի քաղաքապետին հասցեագրած Ձեր 24.10.2025 դիմումի առնչությամբ, կապված Ռուբինյանց 17 հասցեի հարակից ճանապարհահատվածում առկա հասարակական տրանսպորտի կանգառի կետը կանգառասրահով կահավորելու եւ բարեկարգելու հարցերի հետ, հայտնում եմ, որ «Երեւանտրանս» ՓԲԸ-ի կողմից ստացված տեղեկատվությամբ՝ Երեւանի քաղաքապետարանի կողմից իրականացվող հանրային տրանսպորտի լայնածավալ արդիականացման ծրագրի շրջանակներում իրականացվում է նաեւ կանգառասրահների տեղակայման եւ տեխնիկական վիճակի ուսումնասիրություն:

Ձեր կողմից նշված կանգառը ներառված է կանգառասրահների նախնական ցանկում, տվյալ հատվածում կանգառի բարեկարգումը եւ կանգառասրահի տեղադրումը նախատեսված է իրականացնել 2026 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում, եթե տվյալ հասցեի համար հաստատվի ներդրումային մասնակից:

**Նկատեմ.** նման մի պատասխան ստացել էի մասամբ հեռավոր 2013 թվականին: Թե ինչ է նշանակում «եթե տվյալ հասցեի համար հաստատվի ներդրումային մասնակից» ձեւակերպումը, փորձեցի ճշտել պատասխան գրությունում նշված այն կատարող պաշտոնյայի հետ, որը պարզվեց պատահարի պատճառով մոտակա օրերին աշխատանքի չի լինելու: Առաջարկվեց խոսել Երտրանսի 060651488 հեռախոսահամարի պաշտոնյայի հետ, որը զրույցը ընդհատեց թեքահարթակների շուրջ խոսույթը սկսելուց անմիջապես հետո: Հիշենք, որ քաղաքապետարանի պատասխանում ոչ մի ակնարկ չկար այդ առումով: Պարզ մի բացատրություն. եթե մանկասայլակներով կանգառում հայտնվողներն ինչ-որ ձեւով լուծում են իրենց հոգսը, նույնը չի կարելի ասել հաշմանդամության սայլակով շարժվողների մասին, ովքեր ստիպված են մոտ 500 մետր 3 փողոցներ շրջանցելով կանգառ հասնել:

Է, է, է, ում ինչ եմ ասում... թե՞ սպասենք 2026 թվականի ներդրումային ծրագրի իրականացմանը, ակտիվ լրագրությամբ զբաղվող ՀՀ քաղաքացու էլ երախտագիտության արտահայտմանը:

Հավատանք հրաշքներին:

Մեկ էլ հիշենք «Ասեք՝ ասենք» ավինյանական կարգախոսը: Առնվազն մի քանի հազար օրը նվազագույնը 300 դրամ «մուծվող» քաղաքացիներով խնդրում ու պահանջում ենք՝ կառուցեք Ռուբինյանց 17 հասցեի կանգառասրահը, լուծեք մեր արժանապատիվ երթեւեկելու իրավունքը, քանզի ինչքան դա մեզ է պետք, կրկնակի ձեր պարտականությունն է:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**Հազարներից մեկը**
**13.01.2026թ.**

# «Փաշինյանը բոլոր ջանքերը գործադրում է ընտրություններից առաջ քաղաքական դաշտը մաքրելու համար»

## *ՌԴ ակադեմիական հայտնի ինստիտուտի գնահատմամբ*

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** բոլոր ջանքերն ուղղում է քաղաքական դաշտի մաքրմանը՝ 2026 թվականի ընտրություններում իր հաղթանակի երաշխիքներն ապահովելու համար, ասվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի (ИМЭМО) զեկույցում: Դրան անդրադարձել է այդ փաստաթուղթն ունեցող ռուսական «ՌԻԱ նովոստի» լրատվական գործակալությունը:

Ըստ լրատվամիջոցի հաղորդման, փաստաթղթում նշվում է, թե Հայաստանում ներքաղաքական պայքարը շարունակվում է եւ ավելի ու ավելի կատաղի է դառնում հունիսի 7-ին նախատեսված խորհրդարանական ընտրությունների մոտենալուն զուգընթաց:

«Ակնհայտ է, որ 2026 թվականի առաջին կեսի ընտրարշավի ընթացքում դիմակայությունը միայն կսրվի: Խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմության, սփյուռքի անցանկալի ներկայացուցիչների եւ Հայ Առաքելական եկեղեցու (ՀԱԵ) ղեկավարության վրա ճնշումը 2025 թվականին աննախադեպ էր: Փաշինյանն իրեն թույլ է տվել նույնիսկ անձնական վիրավորանքներ եւ սպառնալիքներ Կաթողիկոսի ու Հայ եկեղեցու մի շարք բարձրաստիճան հոգեւորականների հասցեին: ՀԱԵ-ի վրա ճնշման հետ են մեծապես կապված նաեւ հայտնի գործարար **Սամվել Կարապետյանի**, նրա անձնական ու գործարար շրջանակի մի մասի նկատմամբ ճնշումները»,- ասվում է զեկույցում: Նաեւ նշվում է, թե շարունակվում են Հայաստանի նախկին նախագահներ **Ռոբերտ Քոչարյանի** ու **Սերժ Սարգսյանի**, նրանց ընտանիքների անդամների ու կողմնակիցների նկատմամբ հետապնդումները: :

«Այսպիսով, Փաշինյանի թիմն իր բոլոր ջանքերն ու ռեսուրսները կենտրոնացնում է հանրապետության քաղաքական դաշտի լիակատար մաքրման վրա՝ 2026 թվականի ընտրություններում իր հաղթանակը երաշխավորելու համար: Փաշինյանին անհրաժեշտ է համոզիչ, անվիճելի հաղթանակ՝ խորհրդարանում իր սահմանադրական մեծամասնությունը պահպանելու համար, ինչը նրան թույլ կտա անցնել սահմանադրական բարեփոխումներին եւ շարունակել իր արտաքին քաղաքական կուրսը՝ ուղղված ԱՄՆ-ի հետ մերձեցմանը եւ արագացված եվրոինտեգրմանը»,- կարծում են հայտնի ակադեմիական ինստիտուտում:

Ընդսմին նշվում է, թե Փաշինյանի գլխավորած իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, փորձագետների գնահատմամբ, առաջիկա ընտրություններում հաջողության բոլոր հնարավորություններն ունի՝ հաշվի առնելով լուրջ մրցակցության բացակայությունը:

«Քաղաքական ուժերի ներկայիս դասավորության հիմնական պատճառներից մեկը, թվում է, նախկին ղեկավարների լուրջ բացասական վարկանիշն է, որը նրանց խանգարում է ապահովել հանրապետության բնակչության զգալի մասի աջակցությունը: Իշխող կուսակցությունը նաեւ իր վարչական ռեսուրսների ու երկրի տեղեկատվական տարածքի փաստացի մենաշնորհի հաշվին, ինչպես երեւում է, ընտրարշավի ակնհայտ ֆավորիտն է: Կառավարության եւ ընդդիմության միջեւ ավանդական դիմակայությունից բացի հարկ է նշել նաեւ Հայաստանում վաղուց պահանջված երրորդ ուժի եւ նոր, վառ ու միաժամանակ միավորող քաղաքական դեմքերի բացակայությունը»,- ընդգծվում է զեկույցում:

**Գ. Մ.**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝* «Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.: Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 15.01.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: